



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4178

4179

4180

4181

4182

4183

9(47.925)

U-33

200

Printed in Turkey

ԿԱՐԱՊԵՏ ԵԶԵՆՅ

Ս. ԷՀՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

եւ


ԴՈՒՍՏԱՅ ԿԱՐԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ

2012

— — — — —

ԹԱՐԱՎԻԱ 1905

ՏԱՐ. Օ. Խանոսթամբ



ԿԱՐԱՊԵՏ ԵԶԵԱՆՑ

Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ա. Հ.

ԽՈՒՍՑ ԿԵՐՊՎԱՐՈՒԹԵԱՆ ՑԱՐԱԲԵՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ



Թ. ի ժ լ ի ս 1904

Արագատիպ Ա. Քութաթելամէի, Նիկ. 21.

12916 12

СИНЕГО ЦВЕТА

СИНЕГО ЦВЕТА - II

СИНЕГО ЦВЕТА - III

Дозволено цензурою, Тифлисъ, 8-го Октября 1904 г.

6646-57

8

Ա. Եջմիածնի տմենայն հայոց Մայր Աթոռի պաշտօնական յարաբերութիւնները ուստաց կառավարութեան հետ սկսում են Ժ. դարու երկրորդ կիսից՝ Եկատերինէ Բ. Կայսրուհու օրուի Ս. Եղիածնի առաջ տեղի ունեցած Պետրոս մեծի յարաբերութիւնները Հայաստանեայց Եկեղեցու պաշտօնեաների հետ՝ նորա արևելեան քաղաքականութեան համեմատ, որի մէջ մտնում էր նաև Կասալից ծովի ափերի գրաւումը Պարսիկներից՝ կատարուել էին ոչ թէ գերագոյն հոգևոր իշխանութիւն ունեցող Ս. Եջմիածնի հայրապետների, այլ Գանձասարի կաթողիկոսների հետ, որոնք նստում էին Գանձասարի վանքում, Շուշուայ մօտերքը (Ելիսավէտապօլի նահանգ):

Հայոց եկեղեցու մի քանի փառամոլ ներկայացուցիչներ Ս. Եջմիածնի Աթոռի ընկնուած դրութիւնից օգուտ քաղելով, ձգտում էին ինքնազլուխ եկեղեցական կենդրուններ կազմել և կաթողիկոսի տիտղոս սեփականել: Այդպէս էր յառաջ եկել Գանձասարի կաթողիկոսութիւնը Պարսկաստանում, որը գոյութիւն ունեցաւ մինչև Ղարաբաղի խանութեան միացումը Ռուսաստանի հետ, որի իրաւասութեան տակ այն ժամանակ ճանաչում էին միայն Գանձակի (Ելիսավէտապօլի) նահանգում և Կասալից ծովի եղերքներում բնակուղ հայերը: Սակայն այդ

միջոցին անդամ Գանձասարի կաթողիկոսները ճանաչում էին էջմիածնի կաթողիկոսների գերագահութիւնը, որովհետև նրանց էին դիմում ամեն տարակոյսների, թիւրիմացութիւնների և վեճերի ժամանակի նոցա անկախութիւնը միայն իրանց հօտիքարշական գործերի վերաբերութեամբ էր,

Էջմիածնի Աթոռն իւր միացնող զօրութեան և բարոյական ազգեցութեան անխափան յարատևութիւնը պարտական է, ի միջի այլոց, ԺԵ գարում նշանաւոր հանդիսացած մի շարք կաթողիկոսների, որոնք յաջորդաբար, իրենց անձնական հեղինակութեամբ գիտեցան պարտուպատշաճ բարձրութեան վրայ պահել այդ Աթոռը մահմեղական բռնութիւնից և կաթողիկ քարոզիչների որոգայթներից՝ պատսպարելով իրենց հօտը:

Արժ. Աղանեանց Գիւտ քահանայի «Իրւան Պատմութեան Հայոց» վերնագրով հրատարակած ս. Էջմիածնի հայրապետների կոնդակների հաւաքածուն մի զարմանալի տեսարան է պատկերացնում: Այդ հայրապետները, թէպէտ և ընկնուած իրենց ընակավայրում, երբեմն նոյն իսկ ազատութիւնից զրկուած և յետին կարօտութեան մէջ ընկած, գիտէին գարձեալ ամուր բռնել վարչութեան ղեկն իրենց ձեռքում, այնպէս որ ամեն տեղ, ուր վճռելու ինտիր կար, Էջմիածնի կաթողիկոսների բարոյական հեղինակութեան էին դիմում և նրանց հրամանն անսայթաք կատարում Կասպից ծովի ափերից ուսած մինչև Պարսկական ծովածոցը:

1763 թ. Էջմիածնի Աթոռը բազմեց Հայաստանեաց եկեղեցու ականաւոր հովուապետներից մէկը՝ սրբազնագոյն Սիմէոնը:

Նա մի մեծանուն տոհմի շառաւիդ էր և պատանեկան հասակից աչքի էր ընկնում իւր խելքով, հմտութիւններով, հեզ բարքով և քարոզչական տաղանդով: Դեռ սարկաւագ էր, երբ այլ և այլ պատուէրներով առաքուեցաւ Պարսկաստան, Թիւրքիա, Հնդկաստան և արժանի հանդիսացաւ այն մեծ վստահութեան, որ ընծայում էին իրեն. նրան ամեն տեղ սիրում էին և յարգում, և նա բարի յիշատակ թողեց ազգի մէջ:

Մինչ Սիմէոնը Կ. Պօլսից Էջմիածնի գալու վրայ էր, հայրապետական Աթոռը Յակոբ կաթողիկոսի մահուամբ թափուր մընաց, և նա Էջմիածնի համնելուն պէս կաթողիկոս ընտրուեցաւ (1763 թ.): Ամենուրեք ցրուած հօտիք կարիքներին լաւ տեղեակ սրբազնագոյն Սիմէոնը, չնայիլով ձախող քաղաքական հանդա-

մանքներին և Մայր աթոռի ալքատիկ միջոցներին, հաստատամութեամբ ձեռնամուխ եղաւ այն ծրագրի իրագործման, որ մշակել էր իւր քեղմնաւոր, լայն մաքում: Նախ վանքը միքարաչէն պարսպով պատեց, յետոյ Եջմիածնում և շրջակայքում այլ և այլ շէնքեր հիմնեց, մի թղթի գործարան և մի տպարան հաստատեց. այնունետի պաշտպան հանդիսանալով մեր եղեղեցու գտաւոնութեան ու ճշմարտութեան՝ սկսաւ աստուածաբանական գրքեր լոյս ընծայել Կաթողիկների քարոզութիւնների դէմ, որ տարածում էր հայերի մէջ: Իբրև վարչական անձն կարգ ու կանոն մտցնելով ամեն տեղ, խստիւ պատվում էր զանցառութիւններին և միենոյն ժամանակ զօրացնում Եջմիածնի գերազանութիւնը Գանձասարի և միւս մասնաւոր հակաթոռ կաթողիկոսների վըրայ: Այսպիսի գործունէութեամբ կարճ միջոցում վստահութիւն ու հոչակ ստացաւ հայերի մէջ, և ժրաշան կաթողիկոսին համակրող ազգը չզլացաւ նիւթապէս օգնել նրան յօժարակամ նուերներով: Սիմէոնի ժողովրդականութիւնն ու ազգեցութիւնը միայն իւր հօտի մէջ չէր սահմանափակուած, նրա աջակցութեան դիմում էին թէ վրաց նրակը թագաւորն և թէ հարևան խանները, և նա իւր միջամտութեամբ քանիցս անդամ հրկիրը փրկեց նրեանի խանի սպառնացած աղէտներից և աւերմունքից:

Անտարբակոյս մի նշանաւոր քաղաքագիտական գործ էր Սիմէոն կաթողիկոսի ռուսաց կառավարութեան դիմելը և առուածին անդամ պաշտօնական յարաբերութիւններ հաստատելը Պետերուրովի դրան հետ:

Դեռ Վեւարոս Մեծի ժամանակից ի վեր հայ ազգի մէջ արմատացած էր այն համոզմունքը, թէ Ռուսաստանը կը փրկէ նրան մահմեդական տիրապետութեան դարևոր լծից. այդ ակնկալութեամբ Սիմէոնի նախորդ Յակոս կաթողիկոսը 20 յուլիսի 1760 թ. դիմած էր ռուսաց կայսրին մի ուղերձով, որի մէջ խնդրում էր «զազդն մեր ողորմելի և զազդն վրաց հոգալ»: Սակայն այդ ընդհանուր և անորոշ խօսքերով արտայացուած խնդրը ոչ մի հնտիւանը չունեցու, մասնաւոնդ որ ժամանակի պարագաներն էլ նրա յաջողութեան ձեւնտու չէին:

Աւելի շրջանկատ ընթացք բանեց այդ գործում զերերջանիկ Սիմէոնը, մասնաւանդ որ մի յարմար առիթ էլ ունէր ռուսաց կառավարութեան դիմելու—Աժտարխանի հայերը թօթափել էին Մայր Աթոռի իրաւասութիւնը և Գանձասարի կաթողիկոսի իշխանութեան տակ մտել: Սիմէոն հայրապետն այդ

գէպքից վշտացած եպիսկոպոսներին խորհրդի կանչեց և գործի հանդամանքները քննելուց յետոյ, որոշեց Պետերուրդ ուղարկել Դաւիթ վարդապետին մի օրհնութեան կոնդակով, ուր խընդրում էր. «1) որ ս. Գրիգորի՝ Հայաստանի Լուսաւորչի դաւանութեան հետեւող ռուսիարնակ հայերը, ինչպէս մինչև այժմ նոյնական և ապագային ս. Էջմիածնի Մայր Աթոռի իրաւասութեան և իշխանութեան ներքոյ մնան հոգեոր և եկեղեցու վարչական գործերում. 2) որ նրանց վրայ կարգուող եպիսկոպոսն այդ Աթոռի կողմից ընարուի, իսկ Հայրապետին անյայտ և ուրիշ երկիրներից եկաւոր ինքնակոչ հովիւների մուտքն արգելուի. 3) և նրան մի Բարձրագոյն հրովարտակ շնորհուի, որը այն տեղի տաճարում մնայ ի նշան մշտական ողորմածութեան և ի յիշտառակ բարեյածող թագաւորութեան»: Այս կոնդակը գրուած է 1 օգոստոսի 1766 ամի: Կոնդակի հետ ընծայ ուղարկուեցան կայսրուհուն և թագաւածառանզին Յովհաննէս Մկրտչի, Հովհիսիմէ կուսի, ս. Գէորգի մասունքն և Նոյեան տապանի մի մասը:

Միևնոյն ժամանակ Սիմէռն կաթողիկոսը կոնդակներ գըրեց Աժդարիսանի ռուսաց Մէֆօդիյ եպիսկոպոսին և Պետերաբուրգում ու Մոսկվայում բնակուող հայերից մի քանիսին ինդրելով, որ Դաւիթ վարդապետի առաքելութեան յաջողուելուն նպաստեն:

Մայր Աթոռի կեսպանութիւնը բարեսէր ընդունելութիւն գտաւ Պետերբուրգի դրան կողմից: Կայսրուհու համանով արտաքին գործոց Թանձնաժողովը յօրինեց մի հրովարտակ յանուն կաթողիկոսի և յանձնեց Դաւիթ վարդապետին՝ Նորին Սրբութեան հասցնելու համար:

Այդ հրովարտակում, որ գրուած է 30 յուլիսի 1768 թ., կարդում ենք, թէ Ըստ օրինակի նախնեաց՝ Մեզ ևս հաճելի է Մեր կայսերական զթութիւնն ու մարդասիրութիւնն ընծայել թէ արդի գերազնիւ Սիմէռն կաթողիկոսին և թէ նրա հայրապետական աթոռի ապագայ յաջորդներին, ինչպէս և իւզբաշներին ու կառավարիչներին և բովանդակ ազնուաբարոյ Հայազգին: Հաճելի է մեզ նաև թոյլատրել յիշեալ Սիմէռն կաթողիկոսին և նրա յաջորդներին, որ նրանք հոգեոր գործերի և եկեղեցական ծէսերի նկատմամբ՝ իրենց իրաւասութեան ներքոյ պահեն Ռուսաց կայսրութեան մէջ բնակուող հայազգի ու հայադաւան մարդկանց... այս պատճառով՝ երբ որ դրանք պա-

հանջին մի հայ արքեպիսկոպոս և կամ մի ուրիշ աստիճանի հոգեոր անձն առաքել իրենց մօտ, թող այդ պաշտօնեաները նոյն ինքն հայրապետի վկայագիրն ունենան և առանց այդ վկայագրի Մեր պետութեան մէջ չընդունուին... Բայց այդ՝ եւ բաշխաւորում ենք յիշեալ վեհազնեայ Սիմէոն կաթողիկոսին և ազնիւ իւղաչիներին ու կառավարիչներին և ամբողջ ազնուարայոց Հայ ազգին և մանաւանդ ուսուաց կայսրութեան մէջ ընակուող հայերին Մեր Բարձրագոյն Կայսերական չնորհն ու հովանաւորութիւնը. և ընդ սմին ծանուցանում, որ Սիմէոն հայրապետի կողմից Դաւիթ վարդապետի ձեռքով Մեզ առաքուած մասունքները... առանձին հանութեամբ ընդունած ենք... և յիշեալ Դաւիթ վարդապետը... կարող է բերանացի հազոր դել համայն Հայ ազգին Մեր Կայսերական չնորհի և բարեսիրութեան հաւասարիքը, որով կամք և մնամք...»: Այս հովանաւորակի պատճեններն առաքուեցան պարտուպատշաճ գործադրութեան համար Աժտարիսանի և Կիեվի գեներալ նահանգապետներին:

Դաւիթ վարդապետն այդ Բարձրագոյն հրովարտակից զատ կշմիածին տարաւ մասուցանելու հայրապետին նաև մի նամակ մինիստր կոմս Ն. Յ. Պանինի կողմից և ընծաներ արքունի տառնից—«մի քանի կտոր դիմակ և գալ, յապացոյց», ինչպէս գրում էր Պանին կոմսը, «Նորին Մեծութեան առանձին արքայական բարեհանութեան յատկապէս դէպի Զեր անձը»:

Կոմս Ն. Յ. Պանինը վերոյիշեալ նամակում, ի միջի այլոց, գրում էր հայրապետին, «թէ Զեր և թէ ամբողջ ազնիւ Հայ ազգին ուղղուած ամենաշնորհ հրովարտակից հանգամանօրէն կիմանաք, թէ Նորին Կայսերական Մեծութիւնն ինչպիսի յօժարութեամբ բարեհանեց զիջանել յիշեալ Դաւիթ վարդապետի ձեռքով Զեր առաքած խնդիրն և ինչ առանձին արքայական հաւանութեամբ ընդունուեցան նրա բերած մասունքն և Նոյեան տապանի մասնիկու Փաղցը է ինձ», յարում է կոմսը, «որ կարողաց այս առթիւ իմ կողմից մի փոքր ծառայութիւն մատուցանել Զերդ Սրբութեան և ըստ կարելոյն նպաստաւոր լինել Զեր փափագի կատարման, որի մասին այս գրութիւնս բերովը չի զիանայ վերադառնալուն պէս անձամբ զեկուցում տալ Զերդ սրբութեան»:

Դաւիթ վարդապետի առաքելութեան այդ աստիճանի յառող ելքը մեծ յոյսեր ներշնչեց սրբազնագոյն Սիմէոնին: Այսու-

հետև ոչ միայն Հայոց ազգը, այլ և եկեղեցին և մայր Աթոռը կարող էին դժուար պարագաներում ապահնել ոռւսաց կառավարութեան հովանուն և օգնութեան Եկատերինէ Բ., իբրև հետևող իւր մեծ նախորդի արևելքան քաղաքականութեան, որ խոստացած էր «իւր յատուկ գթութեան և հովանաորութեան տակ առնել հայոց ազգը», վերոյիշեալ 30 յունիսի 1768 թ. հրովարտակով սկիզբ դրաւ այն յարաբերութիւններին, որոնք շատ արդիւնաւոր եղան Անդրկովկասեան երկրի ապագայ վիճակի նըլկատմամբ և նպաստեցին ոռւսաց տիրապետութեան տարածուելուն Կովկասում:

Սիմէոն Կաթողիկոսը ջերմ երախտագիտութիւնից դրդուելով, որի մասին խօսում է 10 յուլիսի 1771 թ. կոնդակի մէջ, մի եկեղեցական մաղթանք շարադրեց Ոռւսաց Կայսրի և ամբողջ Կայսերական տան համար, որ կատարուելու էր արքայական տօներին: Այս մաղթանքը, որ կազմուած է մի շարք սարմուներից, աղօթքներից, Աւետարանի և Գործք Առաքելոցի պատշաճ հատուածներից, սկսում է հետեւեալ օրհներգութեամբ.

«Ամենազօր Աստուած և թագաւոր յաւիտենից, որ ի պատկեր քո երկնաւոր և աներեսոյթ թագաւորութեանդ, հաստատեցեր յերկրի թագաւոր (այս անուն) ի կառավարել և ի պահպանել զքո ժողովուրդ. պահեաւ զսաւ անսասան և անպարտելի:

«Աղբիւր կենաց և պարզեիչ խաղաղութեան և գօրացուցիչ քոյոց ծառայից. յաւել զկեանս խաղաղականս ի քէն պատկեցեալ Արքայիս մերոյ (այս անուն) և զօրացն ի թշնամեաց պատերազմի ի փառս անուանդ և ի պայծառութիւն եկեղեց. ոյս քում սրբոյ. յորում փառաւորի անդադար տէրութիւնդ քո:

«Բարձրացն Տէր և փայլեցո զգաւազան իշխանութեան Սորա ընդ ամենայն ծագս երկրի. ընդարձակեա շառաւիզօք և հարազատ ժառանդակցօք մինչեւ ի կատարած աշխարհի. այլ և օրհնեան և պահպանեա զամենեսեան, որք ընդ իշխանութեամբ սորին ենթադրին, յորոց փառաւորի անդադար տէրութիւնդ քո:

«Թագաւոր երկնաւոր՝ զեկեղեցի քո անշարժ պահեաւ և զերկրպագուս անուանդ քում պահեաւ ի խաղաղութեան»:

Վերջապէս աւագ հոգեսրբականներից մէկը չոքած կարդում է նոյն ինքն Սիմէոն Կաթողիկոսի յօրինած աղօթքը, որի

մէջ բացորոշ արտայայտուել են հայ ազգի մտքերն ու գդացումները դէպի Ռուսիան և ոռւսաց վեհապետները։ Այդ աղօթքի բովանդակութիւնը բաղուածօրէն յառաջ ենք բերում։

Եւ արդ՝ մեր ամեներեան խոնարհեալ անկանիմք առաջի քո և մեծաւ պաղտատանօք հայցեմք յամենառատ յողորմութենէդ քումմէ, (Ցէր Աստուած մեր) զի շնորհեսցես զՍա մեզ (զայս անուն) ամէնողորմած Կայսրն ամենայն Ռուսաց ընդ երկայն աւուրս արդարադատ և իրաւախոն թագաւորութեամբ յատկապէս շնո՞րհէ, ողորմութիւն և օգնականութիւն քո անպակաս արասցես ի սմանէ... Զթագաւորութիւն Սորա յաղթօղս, զօրաւորս և անգարտելիս արասցես ի վերայ ամենայն թագաւորութեանց. ձեռն քո ընկալցի և բազուկ քո զօրացուացէ զսա, զթշնամիս սորա հալածուկանս արտասցես. և զյարուցեալսն ի վերայ սորա ի ներքոյ ոտից սորա արկցես։ Քո ամենայաղթ զօրութեամբդ և սրբոյ խաչիդ նշանաւն ամրացուացես և պարսպեալ պահանեսցես զսա և զթագաւորութիւն սորայամենից յերեկեաց և յաներեւութից թշնամեաց։ Անեցուացես և պտղաբերս արասցես զսա արքայազնօք և քոյտպարզէ զաւակօք։ Անպակասելի և անթառամելի արասցես զթագաւորութիւն սորայազգէ յազգ և յորդւոց յորդիս մինչև ի կատարած աշխարհի... Նոյնպէս և զսիրս քոյտպասակ թագաւորիս մերոյ (այս անուն) քաղցր և զթած պահեսցես առ ամենայն ստորադրեցեալսն իւր և մանաւանդ առ ազգս Հայոց. ընդ Որոյ հովանաւորութեամբն մնալով ի խաղաղութեան, փառաւորեսցուք զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգիդ՝ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Այդպէս են աղօթում հայերը ոռւսաց Կայսրի համար, այդպէս էլ աղօթել են նրա համար դեռ այն օրերում, երբ հայերի հայրենիքն և հայրապետական Աթոռը ոռւսաց պետութեան սահմանների մէջ չէին մտած։

Սիմէռն կաթողիկոսը Բարձրագոյն հրովարտակի զօրութեամբ 1773 թ. Ռուսաստանի հայոց վիճակաւոր առաջնորդ կարգեց իշխան Յովանի Երգութեան Երկայնարազուկին։ Այդ ընտրութիւնն էջմիածնի հովուալեափի խմաստութեան և հեռատեսութեան ապացոյց էր։ Յովանի Արդութեան Վրկայնաբազուկ արքեպիսկոպոսը ծագում էր մի ականաւոր իշխանական դարմից և միսեմ մարի ու ճոխ կրթութեան տէր անձն էր՝ գեղեցիկ ու պատկառելի դէմքով, խոչոր ու մտածկոտ աչքերով, որոնք

գրաւում էին նայողի ուշադրութիւնն ու համակրանքը. այդ յատկութիւնների չորհիւ նա շուտ մուտք դառաւ Կայսրուհու և թագաժառանդի մեծագլեցիկ կրանիկների աներում:

Արքեպիսկոպոսին յատուկ թափանցիկ ու նուրբ սիտքը, բնածին խոհականութիւնը, ընդարձակ գիտելիքներն և այն դարու քաղաքագէտներին զբաղեցնող արեելեան երկիրների կացութեան ծանօթութիւնը հնար տուին նրան, չնայելով իւր երիտասարդական հաստկին (Ճնուած էր 1743 թ.) և ուսւերէն չգիտենայուն, վաստակել այնու իսի անձանց համակրանքն ու վատահութիւնը, ինչպէս էին վսեմափայլ Գ. Ա. Պոտեսմկին իշխանը, Ա. Վ. Սուվորովը, Ն. Ի. Պանինն և Վ. Զուրովը: Եշխան Ցովսէփ արքեպիսկոպոսի զատողութիւններն արեելեան քաղաքականութեան վերաբերեալ խնդիրներում այն աստիճան կարեւը էին Գ. Կոտեսմկին իշխանի, Սուվորով, Ն. Ի. Պանին և Վ. Զուրով կոմսերի կարծիքով, որ գրանք բացէ ի բաց անհրաժեշտ գտան նրա ներկայութիւնն երկրորդ տաճկական և պարսից պատերազմների ասպարիզում, և նա ազեկից եղաւ ուսւաց զօլքին այդ արշաւանքների ժամանակ:

Սրբազնի հոյակապ ձիբերը, երկու արքունեաց և բարձրագոյն կառավարչական շրջաններին մերձաւոր լինելը, ինչպէս և Օրթոդոքս եկեղեցու զլխաւոր հովիւների՝ այնէ Մոսկուայի Պատրոն միտրոպոլիտի և Ա. Պետերուրովի Գարրիէլ միտրոպոլիտի հետ բարեկամական յարաբերութիւններ ունենալը շատ նպաստեցին նրա Հայաստանեաց եկեղեցու և հայ ազգի զանազան կարեաց հեղինակաւոր և ազգեցիկ ներկայացուցիչ հանդիսանալուն: Փառասէր էր նա, սակայն ձգտում էր յագեցնել այդ զգացմունքը ծառայելով և օգուտ տալով այն պետութեան, որին անկեղծ նուիրուած էր, և իւր ազգին, որին ի բոլոր սրաէ անձնանուէր էր: Յանուն նորա զրուած հրովարտակներն և ուրիշ թղթերը ցոյց են տալիս, թէ կառավարութիւնը որքան էր գնահատում նրա մատուցած ծառայութիւնները. Եկատերինէ Կայսրուհին և Պօղոս Կայսրը յաճախ ընդունում էին նրան մասնաւոր ունկնդրութեան համար և արքայական պարգևներով լիացնում: Նրան: Եկատերինէ Կայսրուհին ընծալեց նրան մի չքեղ փիլոն, վեղարի մի տկանակուռիսչ և թանգազին մատանիներ, իսկ Պօղոս Կայսրը Ս. Աննայի առաջին կարգի պատուանշանը չնորհեց նրան և բարձրացրեց զերդաստանով հանգերձ յաստիճան իշխանութեան ուսւաց

պետութեան, մինչդեռ նրա տոհմը մինչև այն ժամանակ միայն վրացի իշխանութեան կոչումն ունէր:

Խշան Յովակի արքեպիսկոպոսի Ռուսաստան ժամանելուց եօթը տարի յետոյ, այն է՝ 26 յուլիսի 1780 թ Սիմէոն կաթողիկոսը վախճանուեցաւ, և օգոստոսի 2-ին Էջմիածնի միաբանութեան ընտրութեամբ կաթողիկոս օծուեցաւ Կարնեցի Պուկաս արքեպիսկոպոսը, որ Սիմէոնի մտերիմ գործակիցն էր, հանգուցեալը մահուան ժամին Էջմիածնի միաբանութեան հետ խօսուկցելիս՝ նրան էր մատնացոյց արել, որպէս իւր յաջորդի: Սակայն նրա ընտրութիւնը, կամ յաւ է ասել՝ ընտրութեան եղանակը, մի քանի կնճիւներ առաջ բերաւ Կ. Պուկի հայոց պատրիարքի կողմից: Մյն ժամանակ ծայրագոյն կաթողիկոսի համազգային ընտրութեան սկզբունքը հետեւել կերպով էր իրագործում: Էջմիածնի միաբանութիւնն և Պարսկաստանի (գլխաւորապէս Արարատեան նահանգի) հայոց ներկայացուցիչները հաւաքարար ընտրում էին մի կամ մի քանի կանզգի փառատ և իրենց որոշումն այդ մասին Կ. Պոլիս առաքում: Կ. Պոլսի հայ ժողովուրդը, 'ի գիմաց Թիւրքիայի հայոց, ընտրում էր առաջարկուած կանդիտաաներից մէկին, որի համար և Թիւրքիոյ պետութեան սահմանների մէջ իրաւասութիւն շնորհող քերաթ» խնդրում Սուլթանից:

Էջմիածնի միաբանները, վախենալով մահմեղական խաների միջամտութիւնից կաթողիկոսի ընտրութեան մէջ՝ և ժանաւանդ Երևանի խանի, որ Պանձասարի կաթողիկոսի դրգմամբ հակամէտ էր պաշտպանել դրա թեկնածութիւնը հայրապետական Աթոռին, — փութացին սրբազնագոյն Սիմէոնի մահից յետոյ՝ իրենց ընտրածին նստեցնել թափուր մնացած Աթոռի վրայ և նրան կաթողիկոս օծեցին՝ առանց զեկուցում տալու այդ մասին Կ. Պոլսի հայ ժողովրդեան:

Այդ հանգամանքն առիթ տուաւ Կ. Պոլսի Զաքարիա պատրիարքին, որ կարծեօթ ինքն էր ուզում Սիմէոնին յաջորդել պնդելու, թէ Պուկասն առաջնորդ ընտրութեան ազդի է օծեալ, և թէ նաև Զաքարիան անկարելի է համարում «քերաթ» խնդրել Սուլթանից և կարգադրել որ Պուկասի անունն եկեղեցիներում յիշատակուի: Կ. Պոլսի պատրիարքի այդ ընթացքը շատ էր տագնապում խաղաղասէր Պուկասին: Նա ցաւում էր ոչ այնքան իւր անձնասիրութիւնը չօշափուած համարելուի, որպան Մայր Աթոռի սրբութեան և հեղինակութեան նսեմանալուց

Երկիւղ կրիլով, որովհետև նրա հակառակորդը, փորձում էր սահմանափակել Մայր Սթորի իրաւունքները, ինչոյն գրում էր Պուկաս կաթողիկոսը Զաքարիայի մասին, և աշխատում էր «գանխոնաբանի իշխանութիւն սրբոյ Նթոռոյս արկանել ի նկրքոյ ստորագրելոց լւրոց»: Սրբազնագոյն Պուկասն իւր կոնդառ կի մէջ ի 15 գեկտեմբերի 1780 ամի, որ ուղղուած էր Կ. Պօլսի, անկեղծաբար յայտարարում է, թէ նա պւրտք համարեց ընդունել ընտրութիւնն աչքի առաջ ունենալով հայրապետական Աթոռի օգուտը և թէ ինքն արդար և ծանր մեղադրանքի կենթարկուէր, եթէ մերժէր այդ ընտրութիւնը: Ապա թէ Կ. Պօլսի պատրիարքի բողոքը մի վիրաւորաւած անձնասիրութեան վերագրելով, հայրապետը քրիստոնէական հեզութեամբ յօժարութիւն է ցոյց տալիս նրան թողնել իւր տեղն և յետ քաշուի իրքի մի սոսկ արեղայ, եթէ տաճկահայոց ընտրութիւնը Զաքարիայի վրայ կատանայ: Պուկաս կաթողիկոսը՝ ամբողջ ժամանակ, մինչ իւր բնաբուկու առօթիւ թղթակցութեան մէջ էր Զաքարիայի հետ, ձեռնապահ էր մնում որ և է կարգագրութիւն անելուց, որպէս կաթողիկոս, և նոյն իսկ էջմիածնի մայր տաճարի հայրապետական Աթոռի վրայ չէր նստում: Նրա կոնդակների մեզ հասած ժողովածուի մէջ յառաջ հետ գալիս պատմութեան արժանի տողեր, ուր տպաւորուած են նրա խոնարհութիւնը: բարեպաշտութիւնը, կորովի միտքը, անձնութիրութիւնը Մայր Սթոռին և այն խորին վիշտը, որ մաշում էր նրան, երբ փորձում էին աղաւաղել այդ Աթոռի իրաւունքներն և կամ զլանում արժանաւոր յարգանք բնծայել նրա հեղինակութեան: Ա. Պօլսի ուռւսաց գեսապան Թամարան իւր զեկուցագրի մէջ 30 մայիսի 1801 ամի գրում է: «Պուկաս կաթողիկոսը, որին անձամբ ճանաչել եմ, հայոց վարչական գործերում պատուական յատկութիւններ ցոյց տուող մարդ է, և նրա նուիրական, թէ համեստ, բայց լուսամիտա փափագն է վերականգնել իւր ազգը Ռուսաստանի օգնութեամբ, երբ որ վերջինիս հանգամանքներն ու վիճակը յոյս տան իւր հովանաւորութեան դիմուու յօդուտ, այլ ոչ ՚ի կորուստ հայ ազգի»:

Սրբազնագոյն Պուկասի այդ գժուար կացութեան վախճան դրին Կ. Պօլսի հայ ժողովրդի ներկայացուցիչները, որոնք երկիւղածութիւն և որդիական հաւատարմութիւն գդալով դէսլի էջմիածինը, յաջողացրին պաշտօնանկ անել Զաքարիա պատրիարքին: այնուհետև նրա յաջորդը, որը պառակտում ա-

ջակցելու տրամադրիք չէր, փութաց Ղուկասի համար բերաթ ձեռք բերել Բ. գոնից և կարգագրեց յիշատակել նրա անունը եկեղեցական սլաշտամունքներում: Ղուկաս կաթողիկոսն Աթոռի վրայ հաստատուելուն պէս 1780 թ. սովորական օրհնութեան կոնդակ առաքեց իւր հօտին, որի մէջ Սիմէոնի վախճանուիլը ծանուցանելով, յայտնում էր իւր նորան յաջորդ ընտրուելը: Թուսաստան ուղարկած իւր սնդրանիկ կոնդակում նախ և առաջ մաղթում էր Աստուծու օրհնութիւնը «ոռուսաց ազգի աստուծաւալահ ու բարեկեցիկ երկրի վերայ և Աստուծով կարգուած ու նրանով զօրացած, խաչապսակ բարեպաշտ օգոստավասու միծ Խնքնակալ Խկատերինէ Կայսրունու և նրա տիրախնամ ժառանդ Որդու Աստուծով զօրացած Մեծ Խշան Պաւէլ Պետրովիչի և բարեփառ Մեծ իշխանութիւնու Մարիա Ֆեոդորովնայի և նրա տիրաձիք մատաղ որդոց Ալեքսանդր և Կոնստանդին Պաւլովիչների վրայ»: Ապա թէ Սիմէոն կաթողիկոսի մահուան Հանգամանքներն և իւր կաթողիկոս ընտրուիլն և օծուիլը հաղորդելով, մաղթում էր Աստուծու օրհնութիւնը համայն հօտի և սուրբ Աթոռի հաւատարիմ որդու՝ Յովսէփ Սրդութեան արքեպիսկոպոսի վրայ, և վերահաստատելով նրան պաշտօնի մէջ որպէս զի նա ՚ի կատար ածէ իւր սկսած աստուծահանց զործերը, պատուիրում է առաջուայ պէս որդիտական սիրով հնագանգուել իրեն և աջակցել ամեն բանում:

Խնչպէս վերն ասացինք, Սբբագնակոյն Ղուկաս կաթողիկոսը շատ նախանձախնդիր էր Մայր Սթոռի գերազոյն իրաւունքների պահպանութեան: Իւր նախորդի նման՝ նա էլ զգուշանում էր Գանձասարի Խարալէլ կաթողիկոսի դաւերից և հըսկում, որ դա չփորձէ լնդարձակել իւր իշխանութիւնը ոռուսահապտակ Հայրց վրայ: Եյս նպատակով Ղուկաս կաթողիկոսը հետեւում էր 1768 թ. Բարձրագոյն հրամանի գործադրութեան, այսինքն որ ոչ մի հայագաւան եկեղեցական իրաւունք չունենայ առանց Էջմիածնական հայրապետի դրաւոր թոյլտութեան մուտք զործել Ռուսաստան: և դարձեալ Սիմէոն կաթողիկոսի նման ստէպ ստէպ օրհնութեան թղթեր և աղերսական կոնդակներ էր գրում սահմանամերձ քաղաքների հրամանաստարներին, որ ստորագրեալ պաշտօնեաները խստիւ ջանան վերսլիշեալ Բարձրագոյն հրամանի սահմանած պահանջը կատարել:

Կայսերական կառավարութիւնը ոռուսաց պետութեան սահմանների մէջ Հայաստանեաց եկեղեցուն և Մայր Աթոռին

Հովանաւոր լինելուց զատ՝ չէր զլանում նաև մահմեղական երակի կիրներում հայերին թեարկու հանդիսանալ իւր ներկայացուցիչ ների միջնորդութեամբ։ Այսպէս՝ երբ 1780 թ. Յովսէփ արքեպիսկոպոսը Պուկաս հայրապետի պատուէրով խնդիր տուաւ Ալտաքին Գործոց Ատենին, որպէս զի յանձնարարուի Օսմանեան պետութեան մօտ կարգուած դեսպանին՝ կարեոր զէպքերում «օգնել ու պաշտպանել հայոց Հայրապետի նուիրակներին Թիւրքիայի մայրաքաղաքում»,—այդ առթիւ 23 յունուարի 1781 ամի մի Բարձրագոյն գիր առաքուեցաւ յանուն Կ. Պոլսի ռուսաց գեսպան ստատուկի սովորնիկ Ստալէյևի, ուրի միջի այլոց առուած էր. «Ի նկատի առնելով այդ Հայոց Հայրապետի մշտառե անձնուիրութիւնը Մեր Գահին և Հայերի քրիստոնեայ լինեն, և այն հանգամանքը, որ նրանցից շատերը Մեր պետութեան մէջ են բնակւում և ընդ միշտ Մեր հպատակ են, Մենք ամենայն ողորմոծութեամբ յօժարամիտ հնք ամեն պատեհ գէպքերում ցոյց տալ Մեր արքայական բարեմտութեան և ձեռնտութեան հաւասարիքը թէ նոյն Հայրապետին և թէ ամբողջ Հայ ազգին։ Ուստի այսու կամեցանք իմացնել ձեզ, որ Հայոց Հայրապետը ոչ միայն ընդունած է Մեր Կայսերական հրովարտակն և ըստ այնմ հրամաններ առաքուած են մի քանի սահմանամերձ տեղեր, և թէ այժմ նոյն հրամաններն առաքուած են նաև Ազովի ու Նովորոսիյսկի նոր նահանգների վրայ, այլ՝ թէ գնեւք ևս պարտաւոր էք համակերպուել այն հրամաններին ամեն յառաջ եկած դիպուածներում Հաճելի է Մեզ նմանապէս, որ այն ամեն տեղերում և դէպքերում, ուր Մեր ծառայութեան և Մեր բուն հպատակների անմիջական առեւտրին վնաս զինի, և Մեր ուղղափառ եկեղեցու հետ միակրօն և այժմ տաճկական լծի տակ հեծող յունաց եկեղեցուն ոստիսութիւն չյայտնուի և մերջապէս ուր և երբ Զեզ յանձնուած կոչման պատուին նուազումն բերող բան չը յայտնուի,—այդ ամեն պարագաներում Դուք Զեր բարի ջանքը Հայոց Հայրապետի Զեր ծառայութեան տեղն առաքուած նուիրակների օգտին դործ դնէք, ըստ որում նրանք քրիստոնէական օքէնք դաւանողներ են, և մարդասիրութեան և սոյն հրահանգներին համեմատ ամեն պատշաճաւոր օժանդակութիւն ընծայէք նրանց»։

23 փետրուարի 1798 ամի Բարձրագոյն հրովարտակ չնորհուեցաւ յանուն Պուկաս կաթողիկոսի և համօրէն Հայ ազ-

դի և 16 մարտի 1798 ամի Ա. Պօլսի Թամարա ղեսպանին ուղղուած հրամանագրով կրկնուեցաւ՝ «ամեն կարելի օգնութիւն և պաշտպանութիւն հասցնել Հայոց Հայրապետից՝ Թիւրքիոյ մայրաքաղաքն առաքած եկեղեցական պաշտօնեաներին բոլոր գէպերում և յամենային վարուիլ այն հրովարակին (23 յունվ. 1781 ամի) համեմատ» :

Այդպէս էր ոռուսաց կառավարութեան ընթացքն առ հասարակ Հայ ազգի և 'ի մասնաւորի Հայաստանեայց եկեղեցու վերաբերմամբ. և այդ ընթացքն արտայայտում էին ոչ միայն գահի բարձունքից արձակուող հրովարտակները միայն, հապաև առանձին գէպերում նոյն խակ պետական անձինք, ինչպէս որ տեսնում ենք Դուկաս կաթողիկոսի թղթերից առ վսկեմտափայլ Պոտեհօմկին իշխանը, Բուժեանցի կոմսը, Պանին կոմսն և այլն, ուր Հայրապետն այդ թղթերով շնորհակալութիւն է յայտնում նրանց, որ նրանք հովանաւոր են Հայոց ազգին, բարեսէր են զէպի Մայր Աթուն և բարեկամ ու ձեռնտու իշխան Արդութեան արքեպիսկոպոսին:

Դրիմի խանութիւնը Թիւրքիայից անկախ հրատարակող Քուչուկ-Կայսնարջեան Հաշտութիւնից յետոյ ոռուսաց պիտութիւնը ձեռնամուխ եղաւ մարդարնակ դարձնել նոր զրաւած Նովորոսիյսկի երկիրը: Կառավարութիւնը յարմար դատեց գաղթեցնել այդ շրջանը Դրիմի յոյներին ու հայերին և սկսաւ զանգան արտօնութիւններ խոստանալ նրանց, որ յանձն առնեն կայսրութեան սահմանների մէջ բնակուել: Նա հրամայեց «ամեն կերպով յորդորել այն քրիստոնեաներին, որպէս զի մեր կողմը զան, և յուսագրել նրանց, թէ Կայսերական հովանաւորութիւն կըստանան և այն բոլոր նպաստները, որոնք անհրաժեշտ կրլինին սկզբում»: 9 մարտի 1778 թ. Բարձրագոյն հրամանը յանուն վսեմափայլ Պոտեհօմկին իշխանի պատուիրում էր՝ «ամենայն քաղցրութեամբ ընդունել և ճանապարհի պաշար ու պարէն մատակարարել Դրիմից գաղթելու յօժարութիւն յայտնող բոլոր յոյներին, հայերին և վրացիներին... որպէս զի այդ նոր գիւղացիք մեր սահմանները սաք դնելու օրից սկսած ոչ միայն ուտելիքի նրեւ է կարիք չզգան, այլ և Զեր տնօրէնութեամբ բաւարարերկիր ու տնտեսութեան բոլոր պէտքերը մեր գանձարանից ստանան. բացի այդ մենք չենք յապաղիլ կարևոր արտօնութիւններ շնորհել նրանց»: Դրիմի բրիստոնեայ ընակիչներն առանց դաւանանքի խտրութեան, յունաց միտրոպօ-

լիտի միջնորդութեամբ խնդրեցին տալ իրենց պետական կնիք կլող մի արքունի հրովարտակ, որ Քարձրագոյն անուամբ խոսացուած արտօնութիւնները վաւերացնէր, և այդպիսով գեղջուկների կասկածները փարատուէին: Հայերն իրենց կողմից ռուսաց կառավարութեան հրաւէրն ընդունեցին. մահմեդական լծից ազատուելու և հզօր քրիստոնեայ պետութեան հովանին գտնելու յոյսը այն աստիճան ոգեսրել էր նրանց, որ ամեննեին չվախեցան տեղափոխութեան վտանգներից:

Ղրիմի խանն և ամբողջ մահմեդական ազգարնակութիւնը Ռուսաստանի այդ ձեռնարկութեան լուրն առնելուն ալէս լեռքին աստիճան շփոթուեցան. քրիստոնեաների գաղթն ահապին չարկիք էր սպառնում նրանց և անշուշտ պիտի լնասէր նրանց նիւթական բարօրութեան, քանի որ արդիւնք տուողը միայն քրիստոնեայ ժողովուրդն էր: Սկզբում խանը չէր հաւատում լրի ստուգութեան և բացատրութիւն խնդրեց գեներալ պորուչիկ Ա. Վ.: Սուվորովից, որ և պատասխան տուաւ, թէ Կայսրուհին մարդասիրութեան զգացման և քրիստոնէական պարտաքին հետեւելով, հաճել է իւր սահմանները տեղափոխուել քրիստոնեաններին, «որպէս զի նրանք մօտալուտ աղէտներից և սպասսուու կրտորածից փրկուին»: Ապա Սուվորովը յոյս է յայանում, թէ խանը ոչ միայն չի հակառակուիլ, այլ դեռ նըսպաստաւոր կը լինի, և յարու՞՝ «որովհետեւ Ձեր անձի մասին հոգ կը տարուի և ՚՚Դուք վարձատրութիւն կըստանաք»: Այդ յուսադրութիւնը ոչ միայն չմիտմատացրեց խանին և միրզաներին, այլ կատաղութիւնն պատճառեց նրանց: «Վ սեմափայլ խանը», գրում էր Պոտեհոմլին իշխանը Սուվորովին, «զայրոյթից ուժասպառ լինելով, Քախչիսարայից զուրս գնաց՝ օդափոխութեան համար»: Նոյնչափ դժոն էին և Ղրիմի թաթարները, որոնք ասում էին, թէ քրիստոնեաններին կորցնելն իրենց համար «հոգին մարմնից անջատելուն հաւասար է»: Նոր թաթարները տեսան, որ «սպառնալիքով, յորդորանքով, խոստումներով և իրենց յատուկ ուխտադրութ նենոգութիւններով» նպատակին հասնել անկարող են, սկսան աղերսական զրեր և նոյն խոկ պատգամաւորներ ուղարկել ուռաց արքունիքը, սակայն և այնպէս նրանց բոլոր ջանքերը, Ղրիմում պահելու հայերին, զուր անցան: Սուվորովի կարծիքով՝ «լիշտք է վարձապարել թաթարներին մի քանի մասնաւոր պարտքերի փոխարէն... խոկ քրիստոնեաններին անհրաժեշտ է նրանց կորցրած կաքերի և

յատկապէս այզիների փոխարէն գոհացնել, մանաւանդ որ նը-
րանցից շատերը միայն դրանցով են ապրուստ ճարում»։ Նոյն
Սուվորովը 30 յուլիսի 1778 ամի զեկուցանում էր Ռումեանցե-
Զաղունայսլի կոմսին, թէ «Քրիստոնեաների գերագոյն փափազն
այն է, որ նրանք միասին և արդիւնարեր տեղերի վրայ բնա-
կեցուին... Նրանք ցաւերով են թողում իրենց հայրենի անշարժ
կայքը՝ ուստի ես ստիպուած էր իսոստանալ հէնց այստեղ վար-
ձատրել նրանց արքունի գանձարանից, ապա թէ ոչ չէին յօ-
ժարուիլ գուրս գաղթել»։

Սուվորովի զեկուցմամբ Հայոց գաղթումն սկսուեցաւ
1778 թ. յուլիսի վերջին օրերը։ «Փառք Աստուծու», գրում էր
նա, գաղթականութիւնն սկսուել է»։ Նոյն թուականի օգոստոս
ամսին հայերը Մարկոսեան Պետրոս վարդապետի առաջնոր-
դութեամբ նոր հայրենիքի սահմանը մտան։ Բայց այդ տեղ
առաջին իսկ քայլափոխին ամեն տեսակ անսպասելի աղէտներ
պաշարեցին նրանց... և կատերինէի փոյթն և Պոտեօմկին իշ-
խանի ու Սուվորովի նման աշխատակիցների ջանքը՝ ըստ կա-
րերյն շատ դիւրութիւններ տալու Ուռւսաստան գաղթող ե-
կուորներին՝ կարծես թէ համակրութիւն չէին գտնում ընակու-
թեան համար որոշուած տեղի մերձաւոր իշխանութիւնից։ Ոչ
միայն բաւարար պարէն ու տեղափոխութեան միջոցներ չէին
պատրաստուած, այլ մինչև անգամ երկրի այն մասերը չէին
սահմանուած, ուր որ նորեկները պիտի նստէին։ Գաղթական-
ները նկատերինոսաւ և Սամարա (արդի Նովոմոսկովսկ) հաս-
նելուն պէս ստիպուեցան կանգ առնել և այդ տեղ բացօթեայ
մնալով, առաջին անգամ ծանօթանալ մինչև այն ժամա-
նակ իրենց անյայտ հիւսիսային ձմրան խստութեան հետ, որ
նրանց չար բախտից, մանաւանդ այն տարին, առանձնապէս
խիստ էր։ Հայերի կրած տառապանքն անհնարին է նկարա-
գրել, սառնամանիքը, ցուրան ու հիւանդութիւնները նրանց թի-
ւը կիսով չափ նուագեցին. շատերը ցիր ու ցան փախան,
շատերն էլ, որոնց հետ և Պետրոս վարդապետը, նոյն իսկ թուա-
կանին մեռան։ Մնացածները՝ գարունը հասնելուն պէս սիրտ
առին Սուվորովին զիմելու։ «Երբ մեզ Վրիմից դուրս հանեցիք»,
գրում էին նրանք 18 ապրիլի 1779 ամի, համած էկք, բացի
յայտնի 14 յօդուածներից, խոստանալ մեզ, թէ մեր թո-
ղած տների փոխարէն՝ նրանց նման չինուած տներ կըտրուին
մեզ, տեղերը մեր ցանկութեամբ կորոշուին, թոշակն ու պա-

թէնը կըհայթայթուին։ Սակայն մեր գալուց յետոյ այնպիսի տեղեր յառկացրին մեզ, ուր ոչ ջուր կայ, ոչ անտառ. բայց այդ վայրերում անդամ հարկադրում են ամենքին դրով վկայել, թէ դրանք մեզ յարմար են, սակայն մենք այդպիսի վկայութիւն չենք կարող տալ, որովհետեւ այդ վայրերն ան պէտք են։ Սկզբում պարէն ու պաշարն ամենքին բաշխւում էր, իսկ այժմ մի քանիսին ամենեին չէ տրւում. երկրագործ մշակներին 120 վիրսատվ անջատում են մեզանից... և մենք ոչ միայն նպաստ չենք ստանում, այլ դեռ աւագակների յափշտակութեան և ուրիշ կեղեքումների պատճառով, նոյն իսկ մեր յետին գոյրից զրկուած ենք և այնախի նեղութեան հասած, որ առաջուայ բարեկեցիկ մարդիկն անդամ այժմ մուրալով են հաց ձարում, իսկ միւսները սովից ստիպուած՝ մի չնչին գումարի կամ պատառ հացի փոխարէն իրենց գաւակներին ծախում են։ Սովի պատճառով խաչած թիվն իրրի սնունդ գործածելուց շատ և շատ մանուկներ մեռան»։

Այնուհետև Հայ պատգամաւորները նոյն թուականի յուլիսի 15 ին մի աղերսագիր ուղղեցին նաև Պոտեօմկին իշխանին, բացատրելով, թէ՝ «նրանք խնդրած էին Ս. Դիմիտրից Ռուսովցու արուարձանում նստեցնել իրենց, և այդ խնդիրը Զերոյ վաւմափայլութեան հասանութիւնը գտած էր. սակայն... Ազովի նահանգապետի օգնական (Ազօվսկօյ ցւերնիկ) Գարսեանովը բոլոր երկրագործներին ստիպում է թերս գետի վրայ հաստատուել և ամենասուկալի եղանակով հրամայում, որ այն տեղ շինեն իրենց աները. բայց որովհետև նրանք յօժար չեն, ուստի ումանց շղթայեց և մը քանի օր բռնի և անարդ աշխատութեան դատապարտեց (կանալիայ քաշականաց)։ Բայց այդ ամենքն էլ բնակելի տներ չունենալուց և միշտ անապատում մնալուց՝ արեգակի և ստէպ-ստէպ անձրևների տակ տանջուում են, ըստ որում ահա երեք ամսից աւելի է, որ նոյն նահանգապետի օգնականի հրամանով բնակարաններից արտաքսուած ենք և այժմ դուրսն ենք ապրում, և այս փոփոխութիւնների պատճառով շտուեն արդէն մեռել են...» ուստի և աղաչում էին պատգամաւորները՝ «թոյլ տալ մեր ժողովրդին վերոյիշեալ Ս. Դիմիտրիյ բերդի արուարձանում և դրա շրջակաքում հաստատուեր։

Հայ գաղթականները ուուս իշխանաւորներին դիմելուց դատ՝ իրենց ողորմելի վիճակը նաև Յովսէփ արքեպիսկոպոսին

յայտնեցին, և Յովսէփը, որ այդ միջոցին Աժտարիսան էր, փութաց գնալ Պետքբուրգ միջնորդելու նրանց համար, ուր և հասաւ 5 օգոստոսի 1799 ամի:

«Պոտեռմիխն իշխանը», գրում է եպիսկոպոսն իւր յիշատակալանում, «մեր գալստեան լուրն առնելով իսկոյն իւր մօտ հրաւիրեց մեղ, երկու ժամ խօսակցեց կրօնական խնդիրների, եկեղեցական ծէսերի, զգեստաւորութեան ու զարդերի և իմ մասին. շատ սէր ու յարգանք ցոյց տուաւ մեղ և հրաժայեց զալ հետեւալ օրը Քրիստոսի Այլակերպութեան եկեղեցին, ուր տաճարական տօնի առթիւ ներկայ պիտի լինէր Կայսրուհին. Ակեղեցում՝ խորան հրաւիրեցին ինձ: Կայսրուհու ժամանելուն պէտք էս իշխանի ցուցման համեմատ արքայական դռնից դուրս գալով, գլուխ տուի Կայսրուհուն. իշխանը գեղոյց նրան իմ մասին: Պաշտամունքից յետոյ Կայսրուհին խորան մտաւ և ժպտալով ողջունեց ինձ»:

Կայսրուհու ողորմած ուշագրութիւնը Յովսէփ արքեպիսկոպոսին և վերջնոյս սերտ յարաբերութիւնները Պոտեռմիխն իշխանի հետ հայ գաղթականների վիճակի գիւրաց ման նպաստեցին. նրանք ոչ միայն աեղ ստացան Ռոստովի մօտերքում Իօն գետի վրայ, ինչպէս որ կամենում էին, այլ և մի առանձին արտօնագիր չնորհուեցաւ նրանց: «Աս իմ խընդրածից աւելի ստացայ», գրում էր Յովսէփ սրբազնն իւր յիշատակարանում: Բարձրագոյն հրավարտակով՝ 14 նոյեմբերի 1779 ամի առ «Մեր ամենատաշտարիմ Մարկոսեան Պետրոս վարդապետն և ամբողջ հայագաւան զրիմեցի Հայ հասարակութիւնը» հրաման ելաւ «Հայերի յարաբագոյն քնակութեան համար տալ նրանց Ս. Դիմիտրիյ Ռոստովցու բերդի գաւառը ուրոյն միւս զիւղերից...»: «Բարձրելոյ աջը թող ձեր քարեմիտ ընդհանուր ձեռնարկութիւնն օրհնէ», գրում է Կայսրուհին... «Հաճ և հաւան ենք ոչ միայն ձեզ բոլորիկ Մեր զթառատ հռվանու ներքոյ ընդունել, հապա և Մեր սիրասուն զաւակների պէս սփոփել և այնքան բարեկեցիկ անել ձեզ, որքան որ այդ կախուած է մահկանացուի փափագից և Մեր անընդհատ հռգատարութիւնից...»: Հրովարտակի 4-րդ յօդուածում ասուած է՝ «Ամենողորմածաբար յանձնարարում ենք Պետրոս ծայրագոյն վարդապետին հովուել իւր հետ Պրիմից ելած բոլոր Հայ ժողովուրդը, և թոյլ ենք տալիս նրանց եկեղեցիներ և զանգակատուններ շինել և ազատօրէն ամեն պաշտամունք կատարել

իրենց դաւանութեան համեմատ՝ և թող այդ վարդապետն և հայոց քահանաները միմիայն Արարատեան հայրապետական վանքում նստող Հայոց Հայրապետի իշխանութեան ներքոյ գտնուին...»:

«Պոլուղենկի» կոչուած սահմանավայրի մօտ Նախիջեան քաղաքը հիմնելուց և դրան 12 հազար ղեւեատին արօտատեղի յատկացնելուց յետոյ՝ հրամայում ենք սահմանի մի մտգիտարատ (խորհրդարան) և դրա մէջ ձեր օրէնքների ու սովորութիւնների համեմատ գատաստան կտրել և գործադրել ձեր միջից իսկ վիճակով ընտրուած աւագների ձեռքով, որոնք և կը վայելեն Ազգիկեան նահանգի շտատին համապատասխան աստիճաններ ու ոռակիններ և փոխարքայի իրաւասութեան ներքոյ կը լինին: Խոկ քաղաքի և գիւղերի մէջ՝ ամեն կարեոր դէսպերում պաշտպանութիւն հասցնելու համար՝ կը կարգուին առանձին ոռուս մհծաւորներ, որոնք պարտաւոր կը լինին՝ առանց միջամտելու այդ բնակիչների դատավարութեան՝ մի միայն պաշտպանել նրանց և պատսպարելու...»

Բարձրագոյն հրովարտակի վերոյիշեալ 4-րդ յօդուածը, որ բովանդակում էր Կայսրունու հոգածու խնամքն իւր նոր հապալակների հոգեոր կարիքների նկատմամբ, չէր մուծուած նոյն թուականի մայիսի 21 յանուն յոյն զաղթականների արձակուած հրավարտակում:

1780 թ. հայերն սկսեցին զետեղուիլ իրենց չնորհուած հոգի վրայ, իսկ հետեւեալ թուականի ապրիլ ամսին Յովսէփ արքեպիսկոպոսը Նոր-Նախիջեան քաղաքի հիմքը դրաւ: Հիմնարկութեան աեղում նա հաստատեց և օծեց չոր հիմնաքար չորս Աւետարանիշների անունով և թափօր կատարեց. ապա թէ զանազան ժամանակ թէ քաղաքում և թէ մերձակայ գիւղերում մի քանի եկեղեցի օծեց—իսկ քաղաքի շրջանից գուրսմի բարձրաւանդակի վրայ մի վանք շինուեցաւ և դրան կից՝ մի վարժարան և տպարան:

Միենյոյն թուականին Յովսէփ արքեպիսկոպոսը մի հոգեւոր ատեան (կոնսիստորիա) կազմակերպեց Աժտարխանում և յետոյ նոյն թուականի սեպտեմբերի 9-ին օծեց Մոսկվայի հայոց եկեղեցին՝ յանուն Ս. Խաչի: Խոկ Պետերբուրգի հայոց եկեղեցին նա օծած էր աւելի առաջ, և յատկապէս 18 փետրուարի 1780 ամին: Այդ հանդէսը մի առանձին չքով կատարուեցաւ, ներկայ էին Պոտեհօմկին իշխանն և ուրիշ բազմաթիւ

քարձրաստիճան անձինք: Սըբազանը մի հայերէն քարոզ կարաց և դրա տպագիր թարգմանութիւնը բոլոր հանդիսականուղներին բաժանուեցաւ. և այդ քարոզի երկու փառակագմ օրինակները մատուցուեցան Պոտեօմիին իշխանի ձեռքով Կայսրուհուն և Մեծ իշխանին: Կայսրուհին փետրուարի 23 մի հոյակապ պանագիա և ականակուու խաչ առաքեց սըբազանին՝ ինչան իւր բարեհաճութեան դէպի նա. իսկ մայիսի Յ-ին սըբազանն արժանացաւ ներկայանալ Կայսրուհուն և մատուցանել նրան արքայական տան համար յօրինուած մաղթանքի աետրը, որի հեղինակը, ինչպէս արդէն ասած ենք, հանգուցեալ Սիմէոն կաթողիկոսն էր:

Մոսկվայի եկեղեցու օծումից յետոյ Յովսէփ արքեպիսկոպոսը մտադիր էր Աժմարիսան վերադառնալ, սակայն Պոտեօմիին իշխանի փափագին զիջանելով ստիպուած էր փոխել իւր միտքը:

Պոտեօմիին իշխանն երկրորդ տաճկական պատերազմի նախապատրաստութիւններն աշքի առջև ունենալով, կամենում էր, որ սըբազանը նրա հետ Ղրիմ գնայ և ապա պատերազմում ուղեկցէ նրան: Սըբազանի մտերմութիւնն իշխանի հետ, նրա ծանօթութիւնն արևելեան երկիրների և դրանց բարքերի ու լեզուների հետ և մանաւանդ ազդեցութիւնը թիւրքական նահանգներում բնակուող Հայերի վրայ շատ օգտակար էին առնում նրա գտնուին իշխանի մօտ: Յովսէփ արքեպիսկոպոսը, որի վրանը Պոտեօմիին իշխանի վրանին կից էր, ժիր կերպով մասնակցում էր պատերազմական գործերի ընթացքին. իշխանի յանձնարարութեամբ նա մի քանի անգամ գնաց Մոլդավիայի, Վալախիայի և Բուլգարիայի հայաբնակ քաղաքներն և իւրաքանչիւր քաղաքի նուեանումից յետոյ նոյն իշխանի պատուէրով դուրս էր բերում հայերին և բնակեցնում Պուրոսարի մօտերքը, ուր այդպիսով մի նոր քաղաք առաջ եկաւ, որ հայաստանեաց Լուսաւորչի անուամբ Գրիգորովիս կոչեցին: Այս անգամ էլ ուսաց կառավարութիւնը մի առ անձին խնամք ցոյց տուաւ Հայ գաղթականներին. արքունի գանձարանից միջոցներ տրուեցան մի մայր տաճար, մի վանք, երկու ծխական եկեղեցի, մի առաջնորդարան և մի հոգեոր տաեեան կառուցանելու համար, որին կից մատղիր էին հիմնել մի զիմնազիա. արքունի գանձարանը յանձն առաւ նմանապէս շինել քաղաքային խորհրդարան, արհեստաւորների խանութներ, ջրանցք և այլն,

և բացի այդ՝ դրամական նպաստներ բաժանեց եկաւորների առաջին պէտքերը հոգալու համար:

Կայսրուհին, Հայերի գաղթը դէպի Ռուսաստան քաջալեռելով, չէր մոռանում մի կողմից խրախուսել այդ գործում իրեն աջակցող Յօվսէփ սրբազնին. ուստի 25 մարտի 1793 ամի մի վեղարի խաչ պարգեց նրան. միւս կողմից հրաւէր էր կարդում տեղական իշխանաւորներին օգնել իրեն և պատուիրում, որ իւր նոր հպատակների մասին ուշի ուշով հոգ տանեն: Այսպէս նա՝ Եկատերինոսաւալաւի նահանգապետի ուշադրութիւնը հրաւէրելով այդ նորեկ հայերի վրայ, չՅ վեարուարի 1793 ամի հրովարտակի մէջ պատուիլում էր նրան՝ լաւ ապահովել նրանց կացութիւնը, «որպէս զի ոչ միայն մեր սահմաններն անցած հայերը պահուին, այլ և տարաշխարհում մնացող նրանց կրօնակիցները, եկաւուների բարօրութիւնը տեսնելով, գան միանան նրանց հետ»:

Եկատերինէ Այսպուհին փութաջան իրագործող հանդիսացաւ Պետրոս Մեծի գաղափարի, որ էր կործանել մահմեդական տէրութիւնը և անկախութիւն պարգևել նորա լծի տակընկնուած քրիստոնէական ազգերին:

Յունական կոչուած ծրագիրը, որ այն ժամանակ դրադեցնում էր մեծ Կայսրունու պետական մարդոց միտքը, բովանդակում էր նաև դիտաւորութիւն վերականգնել Հայաստանի քաղաքական անկախութիւնը Ռուսիայի գերազոյն հովանաւորութեան ներքոյ: Այդ մտքին առանձնապէս համակրում էին Պօտեմկին իշխանը և Ա. Վ. Սուվորովը: Թէ որքան նրանք ջատագով էին այդ գաղափարին, կարելի է տեսնել ոչ միայն միւս պատմական տրձանազրութիւններից՝ այլ և Յօվսէփ արքեպիսկոպոսի յիշտակարանից: «1 յունվարի 1780 ամից», զըսրում է նա, «ինձ մօտ եկաւ Յ. Պ. Գորիչն և Կասպեան գաւառուները նուաճելու համար զէպի Պարսկաստան ձեռնարկուելիք արշաւանքի լուրը հաղորդեց. հարցրեց, թէ քաղաքներն ինչ հեռաւորութիւն ունին իրարից, թէ որքսն հայոց և մահմեդական զօրք կայ Քերքենդից ու Գիլանից մինչև Թաւրիկ և այնտեղից մինչև Ղարաբաղ ու Շիրվան: Ի՞նչ որ գիտէի՝ ասացի, և նա արձանագրեց: — «2 յունվարի մեզ այցելեց Գեներալ Պօրուչիկ Ա. Վ. Սուվորովը: Նա էլ միևնույն խնդրի մասին շատ հարցեր առաջարկեց. հանգամանօրէն տեղիկութիւն խնդրեց Ս-

բարատեան Մայր Աթոռի լիճակի մասին և մեծամեծ յոյսեր տուաւ, թէ մեր տիբապետութիւնը վերստին կը հաստատուի»: — «Յ յունվարի Գ. Պ. Պոտեօմկին իշխանի պատուէրով ես և Յ. Լ. Լազարեը նրա մօտ գնացինք. շատ խօսեցինք մեր ազգի և Հայաստանի աղատութեան մասին. նա ինքն երկար հարցումներ արաւ մեր ազգի, Հայրապետական Աթոռի և կաթողիկոսի զրութեան մասին. Մենք թափանձանօք աղաչեցինք նրան վերականգնել Մեծ Հայաստանում, այն է երեանում, մեր տիբապետութիւնը. նա պատասխանեց, թէ այդ հնարաւոր գործ է, բայց թէ զրա համար ամերաժեշտ է, որ Հայրապետն ու տեղական տանութեներից ումանք խնդիր տան իրենց ազատելու մասին, որպէս զի օգնութիւն հասնելու առիթ լինի»:

Այնուհետև 18 յունվարի Սուվորովը խօսակցութիւն ունեցաւ Յովուէֆ սրբազնի հետ Պարարադի մեջիքների մասին, և սրբազնը մի առանձին տեղեկագիր ուուաւ նրան այդ նիւթի վերաբերմամբ, որ հրատարակած է հայոց ազգի պատմութեան վերաբերեալ դիւանական թղթերի Հաւաքածուի Բ. հատորում (էջ. 52—63):

Թուի թէ հայոց աղատութեան գործի նախաձեռնութիւնն էջմիածնի Հայրապետին թողնելու դաղափարն էր, որ դրգեց Պոտեօմկին իշխանին Պաւկաս կաթողիկոսի մօտ ուղարկել գոկտօր Յակոբ Բէյնէգուին¹⁾, որ և ճանապարհ ընկաւ Պոտեօմ-

1) Պոկտօր Յակոբ Բէյնէգուը ծնուած է Այսէրէնում 1744 թ.: Իւր իսկական ազգանունն Այլիս էր, բայց յայտնի չէ, թէ ինչո՞ւ Բէյնէգուի փոխեց: Երիտասարդական հասակից ուսել էր ընական զիտութիւններ և մանաւանդ բժշկութիւն: Աշխարհներ տեսնելի փափագելով, իւր Հայրենիքը թողեց և 1776 թ. Վենետիկ և Կ. Պոլիս գնադ, այն տեղից թորատ, Էրզրում և Կարսի վրայով Պարսկաստան՝ յատկապէս էջմիածնը տեսնելու համար, ուր Հաւանականօրէն հասաւ 1778 թ: Ըլդ միջոցին Հայրապետական ամոռափ վրայ նստած էր Սիմեոն կաթողիկոսը, որ գտնուում էր ամարանոցում: Բէյնէգուը ներկայացաւ նրան Կ. Պոլսի պատրիարքի յանձնարարական նամակով: Նրան մի գորգազարդ և արեւելեան կերպով կահաւորուած չը եղ վըրան յատկագրին: Կաթողիկոսի վսեմ ու բարեմշյն պատկերն և գրաւիչ ձեւերը Հիաղրին նրան: Բէյնէգուի վկայութեամբ՝ Հայրապետը մի ընդհանուր յարգանը վայելող և իւր ուղեորութիւնների շնորհիւ շատ բաներ զիտցող մարդ էր, և Բէյնէգուը շատ օգտաւէտ զիտելիքներ ստացաւ նրանից: Պոկտօրը 9 օր

կին իշխանի կողմից մի գրութիւն և ընծայ տանելով հայրապետին և նամակներ Յովսէփ արքեպիսկոպոսից, Յ. Լ. Կազարեսից և Մանուչարեանից: Սակայն Կաթողիկոսին այս զործում առաջին քայլն անել տալու փորձը յաջողութիւն չդտաւ. Դու կամ զգոյշ վերաբերուեցաւ Պետքբուրգի առաջարկութեան և Էջմիածնի վրայ նոր աղէտներ կուտակելու վտանգից վախենալով, խոյս տուեց որևէ մասնակցութիւնից: Կաթողիկոսը գոկոր Յակորի Էջմիածին գալը Յովսէփ սրբազնին յայտնելիս՝ ի միջի այլոց գրում էր 17 յունիարի 1783 ամի, թէ «Եւ զոր ի՞նչ ի բերան ասելին էր, զամենայն ծանոյց և իմացաք: Մեք ևս գրեցաք չնորհակալութեամբ զպատասխանի մեծի իշխանին և զմերոցն: Եւ զոր ի՞նչ վայել էր, ընդ իւրն խօսեցեալ և ըստ արժանույն շահեալ, ուղևորեցաք աստի, տուեալ նմա և զայս թուղթ: Որում, թէ դէպ լիցի զբեզ տեսանել, գիտելոց եռ զինչ խօսելն մեր ըստ հարկի և ըստ ձեռնուութեան ներկայիս: «Ինչ որ գոկորը բերանացի ասելու էր մեզ՝ ասաց, և լիովին իմացանք, և ամեն բան ինչ որ պէտք էր, խօսեցինք... Նըր տեսնես նրան, կիմանաս, թէ ի՞նչ ասացինք նրան, ի նկատի առնելով ներկայ ժամանակիս պահանջները»:

Պուկաս կաթողիկոսի այդ զգուշաւոր ընթացքը մի այնպիսի խնդրի վերաբերմամբ, որ ոգեսրում էր Պուտիայում և Հնդկաստանում բնակուող, ուստի և Հայաստանի իսկական կացութեան անտեղեակ հայերին, գֆոնութիւն պատճառեց նըրանց. նրանք, կարծիք, սկսան կշտամբել հայրապետին, ասե-

մնաց այնտեղ և մեծ ափսսանքով մեկնեցաւ «այդ՝ գուցէ աշխարհի ամենալաւ անկիւնից». Նա ստիպուած էր աճապարել չետելու վրաց Ներակլ թագաւորի հրաւէրին, որի մօտ և մէկ ու կէս տարի մնաց Թիֆլիկում, իրրե արքայի բժիշկ: Տէ, նէգսի կենսագրի ասելով՝ թագաւորն իւր խօսումները չկատարեց, և այդ եղաւ պատճառ Տէյնէգսի չեռանալուն Թիֆլիկոյ: Տէյնէգսը գնաց Պետերբուրգ և մի տեղեկագիր տուաւ Պոտեմկին իշխանին Վրաստանի դրութեան մասին և մերձաւոր մասնակցութիւն ունեցաւ Վրաստանը Ռուսիայի հովանաւորութեան ներքոյ ընդունելու համար եղած բանակցութիւնների մէջ: Նըրան վերագարձրին Վրաստան Ռուսիայի ներկայ ացուցչի պաշտօնով: 1793 թ. մի քաղաքագիտական իմաստ ունեցող յանձնարարութիւն տրուեցաւ նրան առ Պուկաս կաթողիկոսը: Տէյնէգսը այդ յանձնարարութիւնը կատարելուց յետոյ կրկին գնաց Պետերբուրգ: Պոտեմկին իշխանը հաւատարմութիւն էր ընծայում նրան և տաճկական պատերազմի ժամանակ

լով, թէ նա խոյս է տալիս հայոց ազատութեան գործին արդեկամբ մասնակցելուց և իւր թէ անտարբեր է դէպի ազգի վիճակը, Այդ կշտամբանքը նոյն իսկ կաթողիկոսի ականջին էլ հասաւ, և նա մի ընդարձակ գրութեան մէջ առ հնդկարնակ Շամիր խանը, որ այն դարու ամենագործունեայ ազգաւէրներից մէկն էր, բացատրեց իւր հայեացը յիշեալ խնդրի վերաբերմամբ, ցոյց տալով և այն պատճառները, որոնք ստիպում էին իրեն իւր բռնած ընթացքին հետևել: «Գրած էիր ինձ որ մեր ազգի և աշխարհի ազատութեան համար հոգ տանեմ և յիշատակած էիր այդ նպատակին ծառայող մի քանի միջոց ներ: Խօսքերդ քո ջերմ ազգասիրութեան և ազգի մասին ունեցած հոգածութեան ապացոյց են: Երանի թէ զրանք գոնէ մասմար իրագործելի լինէին, դրա համար սակայն անհրաժեշտ է, որ մեր ազգը հաւատացողների և բարեմիտների իշխանութեան ներքոյ գտնուէր և ատահովութիւն վայելէր, որպէս զի կարենայինք նրանց օգնութեամբ երջանկութեան թեկնածել. բայց անա անողորմ թշնամիների վայրագութեան ենք մատնուած. և քանի որ նոյն իսկ հաւատացը ծառայութեամբ անկարող ենք գթութիւն գտնել նրանցից, ի՞նչ կինէր, եթէ մենք անհազանդութիւն ցոյց տայինք. Առ այս դու կասես, թէ մեզ հաճելի է սարկանալ անօրէններին և մենք ազատութիւն սիրող չենք. սակայն օրհնեալ որդի, եթէ գու մեր երկիրը զայիր, Զուլֆայից մինչև այստեղ և ուրիշ կողմերը չընէիր, ուր որ ապրում են մերայինք, աշերբովկ կըտեսնէիր նրանց թշուառ կացութիւնն և իշխանների բռնութիւնը և անձամբ կըհամոզուէիր, որ այդ դիտումները չեն կարող իրագործուել, և եթէ իրագործելի լինէին, միթէ այնքան յիմար ենք, որ չկամենայինք տառապանջներից ազատուել...¹⁾

Մոլդավիա կանչեց նրան: Իէյնէգսը կարծեօք իմօտոյ ծանօթ էր Յավսէփ Սրբազնի, Լազարեանների և Մանուչարեանների շետ: Սրբազնն իւր յիշատակարանների մէջ ասում է, թէ 1793 թ. նրան բժշկում էր Իէյնէգս զօկտորը: Իէյնէգսը կոլէժակի սավէտնիկի ասսիժան ունէր և բժշկական ինստիտուտի վերաբեսուչ և բժշկական խորհրդի բարտուղար էր, երբ որ մեռաւ: Biographische Skizze des Russisch-Kaiserlichen Collegien Raths Dr. Jacob Reineggs, von J. D. Cerstenberg. Cotha und S. Petersburg. Bei Cerstenberg und Dittmar. 1797. Էջ 333—335, 377—382, 387—389:

¹⁾ Գրեալ էին մեզ վասն ազատութեան աշխարհիս մերոյ և

«Թւռում է թէ ոմանք ըստ հաճոյից խօսելով, թէ այս ինչ և կամ այն ինչ կողմից օգնութիւն կըհասնի մեզ, մտքերիդ ազդել են... Հաւաստեաւ իմացիր, որ այժմ ոչ հիւսիսային տէրութիւնից մեզ օգնութիւն կըհասնի, ոչ էլ ուրիշնե-

ազդիս հոգ տանել, և ցուցեալ էիր զոմանս կերպս կարգադրութեան՝ որք ի ջերմեանդ սիրոյդ և ի ջատագովութենէդ առ ազգս պարզմտութեամբ արտագրին ասութիւնքդ այդոքիկ: Այլ երանի էր՝ թէ զոնեա մասնաւորապէս արդիւնանային քանզի առ այդ պիտոյ էր ամենայն ազգի մերոյ ընդ հովանեաւ հաւատացեալ և բարեմիտ տէրանց լինել և զապահովութիւն ունիլ, որ իննամածութեամբ նոցա կարիցէին ձգտիլ առ երջանկութիւնս, բայդ աշա ըստ մեծի մասին մատնեցեալը կան ի խսութիւնս թշնամեաց անողորմից, որ հաւատարմապէս ծառայելով ևս չկարեն զողորմութիւն գտանել, ուր մնաց թէ զապստամբութիւն զուցանիցեն, որ բնաւ ոչ իսկ կարեն: Առ այս ասիցեն՝ թէ հաճիր ընդ ծառայութիւն այլազգեաց և ոչ սիրէր զապստութիւնն բայդ լինէր՝ թէ օրհնեալդ այժմ յայս կողմունս զայիր և շրջազայէիր ի ֆուղայու մինչեւ ցաստ և յայլ կողմունս՝ յոր զոն ազգ մեր և ականատես վերահասութեամբ իմանայիր զկացութիւնս մերապնէից և զանօնականութիւնս և զբուութիւն իշխողացն և ինքնին կնքէիր՝ թէ այս զիտմանց յառաջանալ ոչ լինի. ապա թէ հնարաւոր թէ յառաջանալն միթէ յիմար իցեմբ, որ ի տառապանաց զերծանիլ չկամցիմբ... թուի թէ ուսանը ըստ հաճցից խօսելով, թէ յայս ինչ յայն ինչ կողմանց ձեռնտուութիւն և օգնականութիւն լինիցի մեզ, զողազեալ են զմիտսդ... և հաւատապէս իման, որ ոչ ի հիւսիսական և ոչ յայլոց մեզ այսկութիւն կարէ լինել այժմ, բաց յԱստուծոյ, եւ ի շրջապատեցեալ զոլս մեր ի թշնամեազ եթէ նշան երեխից յարելոյ և հօյելոյ առ կարծեցեալ օգնիչն առաջի կայ նեղութիւն, նոշտանկումն, յափշտակութիւն և սուր. իսկ եթէ անստոյդ համարիցիս զդրեալըս և դարձեալ անսայցես նոյա՝ որք զհաճոյականս խօսին, ապա յայլոց հաւատարմաց տեղեկացիր՝ թէ յանցեալ ամսն մինչ Արցախեցիք ձգտեցան առ ապաշխանալ այնց դառնութեանցն ի քանի՞ տեղեաց զինչ անցը անցին ընդ նոսա, զիարդ մահացաւ խղճալի Յովհաննէս կաթուղիկոսն և Նքառէս աղաւաղեցաւ. սուրբ Ամոռն Գանձասարու. և այժմ ո՞ւր են մելիքազւնքն, և զի՞նչ կրեցին որ և ի յառաջանալ այնց դառնութեանցն ի քանի՞ տեղեաց զրեցին առ մեզ զբանս զովութեան՝ թէ յայտ բարւոք էր՝ որ գուրք ոչ ցուցիր առ նոսա զնշան համակամութեան և անվընաս պահեցիր զսուրբ զայդ) և ի տեղեկանալդ զպամանէստուգութեամբ, ապա ընտրեա զսուտն և զիրաւն և անմեղագիր լեր մեզ:

րից, այլ միայն Աստուծուց: Եթէ մենք, թշնամիներից շրջապատռւած, որ և է նշան ցոյց տանք, թէ յարւում ենք և կամ թէ աչք ենք ուղղում այդ կարծեցեալ օգնիչներին, այն ժամանակ մեզ ուրիշ բան չի սպասիլ, բայց թէ նեղութիւն, խոշտանգանք, յափշտակութիւն և սուր, իսկ եթէ մեր գրածն անստոյգ համարես և հանոյական բան ասողներին ականջ դնես, տեղեկացիր միւս վստահելի անձերից, թէ անցեալ տարիներն ինչեր կրեցին իրենց բռնակալից արցախեցիք, երբ այն հանոյախոսների վրայ յոյս դրին, և ինչպէս մեռաւ խղճալի Յովհաննէս կաթողիկոսն և ինչպէս քանդուցաւ Գանձասարի աթոռը, և ուր են այժմ մելիքներն և ինչ աղևաներ քաշեցին նրանք: Այդ դառնութիւնների ժամանակ որքան տեղերից մեզ գովասանք գրեցին, թէ շատ լաւ էր, որ մենք համարութեան նշան ցոյց չառինք նրանց և մեր սուրբ գահը միասներից ազատ պահեցինք: Այս բոլորն ստուգութեամբ իմանալուց յետոյ՝ զատիր սուրան իրաւից և մեղադիր մի լինիր մեզ:

Սակայն թէպէտ Պոտեօմկին իշխանի փորձը՝ գրդելու կաթողիկոսին Հայաստանի ազատութեան նախաձեռն լինել՝ յաջողութիւն չունեցաւ, բայց և այնպէս Կայսրուհին իւր նախագծին հետեւելուց յետ չկասեց: Ուուսաց զօրքերը Վ., Ա. Զուրովի կոմսի հրամանատարութեամբ դէպի Պարսկաստան խաղացին:

Արշաւանքի մերձաւոր նպատակն էր, հրովարտակի ասեւի, «վերահսատատել Իրակլ թագաւորին իւր կալուածների մէջ, Ուուսիայից կախուած դիբը տալ Դարաբաղի հայ մելիքներին և նրանց հապատակ բնակիչներին, և յօդուտ մեր զրաւել Արարատեան հայրապետին, որ այնքան զօրեղ ոգդեցութիւն ունի ամբողջ ցիրուցան հայ աղդի վրայ: Այս բոլորը շատ միջոցներ կըտար մեզ քրիստոնեաների զիխաւորութիւնը հաստատելու և մեր գերագոյն իշխանութիւնն ապահովելու համար»:

Պ. Ա. Զուրովի կոմսը ինդիր ուղղեց Յովսէփ արքեպիսկոպոսին՝ «ցոյց տալ մեղ Զեր փոյթեռանդն ծառայութեան նըշանը՝ Մողգոկ զնալ և բանակցել եղրօրս հետ Պարսկաստանի և դրան սահմանակից ազգերի գործերի մասին, որոնց վերաբերմամբ դուք այնքան ընդարձակ ու մանրամասն տեղեկութիւններ ունիք»: Յովսէփ սրբազնը փութաց ուղարկել Պ. Զուրովի կոմսին իւր յօրինած տեղեկագիրը Հայս ստանի և սահմանամերձ նահանգների մասին՝ դրանց աշխարհագրական քարտիզով հանդիրձ. և Վ. Ա. Զուրով կոմսի հետ տեսնուելուց յե-

տոյ գըեց արքեպիսկոպոսը Յ. Լ. Լազարեին, թէ ասա էլ, եղաբարն էլ փափագում են, որ մենք ուղեկցինք արշաւանքին մեր ազդի քաջալերութեան և օգտի համար: Մենք անկարող էինք մերժել և մեր տկարացած մարմինը խնայել, և կարծում ենք, թէ այս զործի վերջը Աստուծու ողորմութեամբ օգնութիւն և ապահովութիւն կը լինի մեր ազգին»:

Վ. Ա. Զուրով կոմսը 26 հոկտեմբերի 1796 ամի գրով խնդրում է Յովսէփ սրբազնին գնալ միանալ Գեներալ Մայօր Ա. Մ. Ռիմսիլի-Կորսակօվին բանակին՝ «որպէս Քրիստոսի միակ հօտը հովուող բարի հովուագետ և հայցել յօդուա քրիստոնէութեան Արարատեան հայրապետի սուրբ օրհնութիւնը մեր ապագայ գործերի վրայ, հայրապետի, որին ես ուղած եմ մի առանձին գրութիւն և յանձնած նոյն իսկ Գեներալ-Մայօր Կորսակօվին՝ Նորին Սրբութեան հասցնելու համար»:

Դժուար գործ յանձնուեցաւ սրբազնին. Վ. Ա. Զուրով կոմսը, չնայելով իւր ջերմ ցանկութեան շուտով ազատելու քրիստոնեաներին, ստիպուած էր սակայն անտարբեր երեալ նրանց, որպէս զի մահելական ժողովրդին կասկածանքի տեղի չտայ: Բայց որովհետեւ այդ ընթացքը քրիստոնեաների նկատմամբ կարող էր խախտել նրանց վստահութիւնն և Ռուսիայի վրայ դրած յոյսերը, ուստի և նրանց հաւատը դէպի Ռուսաց կառավարութեան խոստումները վառ պահելու պաշտօնը սրբազնին յանձնեցին: Վ. Զուրով կոմսը գրում էր Ռիմսիլի-Կորսակօվ գորավարին. «Գութացէք Յովսէփ արքեպիսկոպոսի միջնորդութեամբ հաստատուն պահել Արարատեան Հայրապետին առ մեղ ցոյց տուած անձնութրութեան մէջ»:

Յովսէփ սրբազնը շատ գործունեայ հանդիսացաւ. նա յորդորում էր համբերել Աղա Մահմէդ խանի իշխանութեան տակ մանելու պատրաստ վրաց Խրակլ թագաւորին՝ Ռուսաց օգնութեան յոյս տալով նրան. յորդորում էր և խաներին աջակից լինել ռուսաց զօրքին, երդմամբ վստահացնելով, թէ Ռուսաստանի կողմից ոչ մի զրկանք չի հասնիլ նրանց. անձամբ միջոցներ էր մտածում ռուսաց զօրքին պարէն և պաշար, նոյն իսկ եղներ հասցնելու համար. հովուական թղթեր էր գրում Պարսկաստանի հայերին՝ «կրկնապատկել իրենց անձնութրութիւնը դէպի Կայսերական գտն» և այլն:

«Անկարող եմ բաւական չորհակալութիւն յայտնել Զերդ սրբազնութեան այդքան մեծ ջանքերի համար, որ գործ էք

դնում յօդուտ իմ առաջնորդած զօրքերի», գրում էր 15 նոյեմբերի 1796 ամի թիմսկիյ-Առուսակօվ զօրավարը Յովսէփ արքեպիսկոպոսին, «և շատ ցաւում եմ, որ այս տղմուտ ու ցեխոտ ճանապարհները յոգնեցնում են Ձեզ»: Ժիայոս եմ», գրում էր նա նոյեմբերի 12-ին, «որ արդէն Ձերդ սրբազնութեան հոչակը հայ զիւղերում և նոյն խակ խանի մօտ ինձ մեծապէս օգտակար կըլինի այս գործի մէջ (պարէնի հայթայթման), և ես ընդ միշտ երախտապարտ և անձնուէր կը մնամ առ Ձեզ»: Վ. Ա. Զուրօվ կոմսն էլ իւր կողմից սրբազնին անկեղծ չնորհակալութիւն յայտնելով, խնդրում էր նրան (նամակ 2 դեկտեմբերի 1796 ամի, համար 508)՝ «չարունակել ընդհանուրի օգտին նուիրած փոյթեռանդն ջանքերը»:

Պուկաս կաթողիկոսն առանց խղելու բարեկամական յարաբերութիւնները խաների հետ, ոռուսոց զօրքերի Գանձակ մտնելուց յետոյ հազիւ կարողանում էր ծածկել իւր ուրախութիւնը սպասելով նրանց մօտենալուն Եջմիածնին. սակայն յանկարծ «աշխարհիս ամենաօգտակար գործը», ինչպէս որ նա գրում էր Շամիր խանին, ընդհանութեցաւ բօթարեր լրով, թէ Եկատերինէ Բ. վախճանուած է և ոռուսաց զօրքերը յետ են կանչւում Պարսկաստանից... Նատ ծանր վիշտ պատճառեց սրբազնագոյն Պուկասին և Վրաստանի ասպատակուիլն Աղա Մահմէդ խանի կողմից:

Կայսրունու վախճանման օրից շատ չանցած, և յատկապէս 1799 թ. աշնան, Պուկաս հայրապետը հիւանդացաւ և բաւական ժամանակ տառապելով՝ նոյն թուականի գեկտեմբերի 28-ին հոգին աւանդեց:

Երջանկայիշատակ Պուկաս կաթողիկոսի դործունէութիւնը և անձնաւորութիւնը գնահատելիս չենք կարող անտես առնել նորան պատիւ բերող այն հանգամանքը, որ նա սին փառասիրութեան անմատչելի մնաց և վեհութեամբ կատարում էր իւր բարյական պարտականութիւնքն Ազգի և Նկեղեցւոյ առջե, այն պարտականութիւնները, որ դնում էր նորա վրայ իւր բարձր կոչումը: Նա չենթարկուեց ընդհանուր հոսանքին, այլ իւր լուրջ հայեացքով, հեռատեսութեամբ և զգուշաւոր ընթացքով՝ փրկեց, ինչպէս որ տեսանք, հայրապետական կառավարութեան անգութ վրէժից, որ անշուշտ նրա անդպատութեան կը յաջորդէր, եթէ նա իւր օտի աղղեցիկ անդամն երից շատերի ստիպողական հրաւէրնե-

րին ականջ դնէր: Միենոյն ժամանակ նա լիովին գնահատում էր իւր նախորդի գործերն և ամենայն փութով նկրտում, որ Սիմէօն կաթողիկոսի սահմանած կարդ ու կանոնն եկեղեցու ներքին վարչութեան մէջ ամրանայ և ռուսաց Կայսերական Տան հետ սկսուած յարաբերութիւնները ոերտանան: Երբեն իւր հօտի մտաւոր և բարոյական կրթութեան նախանձախնդիր՝ նա ոչ նիւթական միջոց էր խնայում, ոչ էլ ջանք հայերէն գրքեր տպագրելու համար: Սիմէօն կաթողիկոսի «Պարտավճարի» արագագութեան յառաջիկայ աւարտումն և ապա թէ «Ժամագրքի» տպագրութեան ընդ փոյթ ձեռնարկելու դիտաւորութիւնը Յովսէփ սրբազնին յայտնելիս՝ Ղուկաս հայրապետը, ի միջի այլոց, բողոքում էր Պետերուրդում բացուած տպարանի մէջ գրքեր տպելու առաջարկի դէմ, ասելով, թէ «տպագրատուն ըստ մերում լեզուի գոյ և յայլ տեղիս... սակայն որպէս էր ջանք լուսահոգոյն, նոյնպէս և մեր ամեննեցուն այն է ջանք և դիտումըն, զի ի սրբոյ Աթոռոյս ելցէ այսպիսի ինչ, առ նորա ի գովեստ և ի բարձրութիւն սմին և անուան լուսահոգույն, որ գտպագրատունս զայս հաստատեաց, զայսու որպէս զանց արարեալ յայլ տեղիս արկցուք»: «Ուրիշ տեղեր էլ հայոց տպարաններ կան, բայց նա, իւր նախորդի նման, աշխատում է, որ գրքերն իշմիածնում տպուին, որպէս զի թէ Մայր Աթոռի բարոյական հեղինակութիւնը բարձրանայ և թէ տպարանը հիմնարկովիլ յիշատակը մեծարուի»:

Կաթողիկոսի այդ հոգատարութիւնը հայերի մէջ կըթութիւն և գիտութիւն տարածելու մասին, ամեն ուրեք համակրանք գտաւ: Ղուկաս հայրապետի բնդարձակ թղթակցութիւնը¹⁾ Յովսէփ սրբազնի և մանաւանդ Յ. Լազարէի, Մարգար և Փիլիպպոս Մանուչարեան եղբայրների (Ուստաստանում) և Շամիր խանի հետ (Հնդկաստանում) բացայայտ ցոյց են տալիս, թէ որքան էին հետաքրքրում այն դարու լուսամիտ հայերն ազգային դպրոցներ հիմնելու և հայերէն գրքեր լոյս հանելու և տարածելու կարևոր խնդրով:

Այսպէս 17 յունուարի 1783 ամի Մանուչարին ուղած գրութեան մէջ Ղուկաս հայրապետն ասում է. «Թալով նոր

1) 17 յունուարի 1783 ամին նա գրում է Յովսէփ արքեպիսկոպոսին, թէ նա միանուագ 100 նամակ է արձակել: «Ի՞ւան Պատմութեան Հայոց», հատ. Գ. երես 263:

պատմութեան, որ կը փափագէիր շարադրուած տեսնել, — այդ մասին են քեզ յետոյ կը դրեմ. իսկ վասն դպրատուն հաստատելոյ ըստ երոպական լիգուաց, այսպէս գիտաաջիք, զի մեր լեզուաւս դպրատուն, զոր ունիմք ի սուրբ Աթուոջա՝ հազիւ պահեմք հաստատուն, ըստ որում չէ մեզ ձեռնտու որպիսութիւն և կացութիւն երկրի», ինձ ինչ որ վերաբերում է մի այնովիսի դպրոց հաստատելուն, ուր երոպական լիգուներ էլ աւանդուէին, իմացիր, որ մենք ունինք Մայր Աթոռում մի դըպրատուն մեր լիգուն ուսուցանելու համար, բայց այդ էլ հազիւ ենք հաստատուն պահում, որովհետեւ երկրիս որպիսութիւնն և կացութիւնը ձեռնտու չեն մեզ: Այդ մի դժուար գործ է այժմ, իսկ յետոյ ինչ կլինի — Աստծուն միայն յայտնի է»:

Յովսէփ արքեպիսկոպոսի ցանկութեամբ կաթուղիկոսը հասցնում էր նրան զանազան գլքեր ու ձեռագիրներ և շատ խելացի խորհուրդներ տալիս հրատարակելի գրքերի մասին:

Յովսէփ արքեպիսկոպոսին թողնելով Ռուսաց քաղաքական շրջաններում աշխատելու յօցուտ հայկական հարցի, Պուկաս կաթուղիկոսը այդպիսով չհրաժարուեց Ռուսաստանում գանուած իւր եռանդուն ներկայացուցչի վերայ ունեցած ազդեցութիւնից: Այդ կողմից միանգամայն ինքնուրոյն մնալով, նա ինչպէս երեւմ է դօքա. Իէյնեգսի քաղաքական յանձնարարութեան արդիւնքներից, Յովսէփ արքեպիսկոպոսի ձեռքում կոյր գործիք չդարձաւ նոյն իսկ այն դէպքում, երբ վերջինս գործում էր Ռուսաց կառավարութեան նախաձեռնութեամբ և առաջարկութեամբ: Հայերի գաղթը Ռուսաստան, Նախիջևան և Գրիգորիոպոլ քաղաքների հիմնարկութիւնը, հոգևոր ատեանի հաստատութիւնն Աժտարխանում և ոռուսարնակ հայոց նոր թեմի ներքին վարչութեան ուրիշ գործերը կաթողիկոսի յարատե հոգատարութեան առարկաներ էին և նիւթ նրա թղթակցութեան սրբազնի հետ:

Սակայն այդ գործնական խնդիրներից զատ՝ Պուկաս կաթուղիկոսն իւր շնորհալի աշխատակցի հետ նամակներ փոխանակելիս, մանաւանդ վերջին տարիները, ստէպ ստէպ շօշափում էր և նրա ապագայի հարցը: Յովսէփ արքեպիսկոպոսը ինքն էլ մտատանջ էր լինում այն մասին, թէ ինչ կերպով պիտի շարունակէ հայաստանեաց եկեղեցուն ծառայել: Նա փափագում էր մի օր բազմել Եջմիածնի Մայր Աթոռի վրայ, որի բարձունքից կարող էր մի աւելի լայն ասպարէզ բանալ ծա-

ռայելու իւր ազգին, որից այնքան տարի անջատուած էր, և ոչ ոռւսաց պետութեան երկու արքունիքներում իրեն շուայլած չնորհները, ոչ այդ արքունիքներում իրեն ընծայուած պատուաւոր գիրքը, ոչ ել պետութեան մատուցած իւր ծառայութիւն. Ների գնահատուելն և ճանաչուելը կարող եղան փարատել նրա մտքից այդ փափազը: Զնայելով Մայր Աթոռի ընկճուած դրութեան, զրա բարոյական նշանակութիւնն այնքան մեծ էր, որ Յովսէփ տրքեպիսկոպոսը սիրով պատրաստ էր փոխանակել հիւսիսային մայրաքաղաքի հեշտանքն ու պատիւները Պարսկաստանում սպասող զրկանքների ու վտանգների հետ... Գեռ Սիմէոն կաթողիկոսի օրով Յովսէփ սրբազնը ցանկութիւն էր յայտնած Զմիւնիա կամ Պօլիս առաքուելու, որոնց հայ ժողովուրդը մեծ ազգեցութիւն ունէին կաթողիկոսների ընարութեան վրայ, սակայն այդ դիտաւորութիւնն ի դերի ելաւ. Պուկասի ընտրութիւնն էլ Սիմէոնի մահից յետոյ, ինչպէս տեսանք, այնպէս արագ կատարուեցաւ, որ Յովսէփը ժամանակ անգամ չկտաւ յօգուտ իւր թեկնածութեան որ և է բան անելու: Նա պարտուածաւշան խոնարհութեամբ հնազանդուեցուած ազգի նորընտիր հայրապետին, բայց և բնականաբար՝ իւր էական արժանիքների համեմատ՝ իրեն էր համարում ոչ միայն նրա օրինաւոր, այլ և արժանաւոր յաջորդը: Արգեօք նորան յուզում էր այն միաբը թէ իւր բազմամեայ ծառայութիւնն եկեղեցուն և ազգին ոռւսաց պետութեան մէջ ըստ արժանոյն կգնահատեն Ռուսաց սահմաններից զուրս եղած հայերը, որոնցից և զիմաւրապէս կախուած էր: Այս բոլորն ի նկատ առնելով նա որոշեց մի նամակ գրել Պուկաս կաթողիկոսին: Ինչքան որ կարելի է դատել Պուկասի պատասխանից այդ գրին՝ Յովսէփ յայտնած պիտի լինէր, թէ կարեոք է համարում Էջմիածին գալ իւր թեմի մի քանի գործերի մասին հայրապետի հետ անձամբ խորհրդակցելու համար առանց յիշշելու, թէ կըմնայ արգեօք Էջմիածնուում, թէ կըլերագառնայ Ռուսաստան,—և խնդրած, որ իւր բացակայութեան ժամանակ թեմի գործերի վարչութիւնը Եփրեմին կամ Գանիէլին յանձնուի: Ի պատասխանի այդ գրութեան Նորին Սրբութիւնը 1782 թ. իմաց տուաւ Յովսէփին, թէ անյարմար է դատում անորոշ պաշտօնով Ռուսաստան ուղարկել այդ վարդապետներից մէկին կամ միւսին, այլ թէ կըցանկար Եփրեմին եպիսկոպոս ձեռնադրել և Ռուսաստանի թեմական առաջնորդ կարգել, որպէս

զի նա սկզբներում Յովսէփի ցուցմունքներով դեկալարէ և քայլ առ քայլ ընտելանայ թեմի վարչական գործերին. ապա թէ մի քանի ժամանակ անցնելուց յետոյ Յովսէփը կարող կը-լինէր Էջմիածին վերադառնալ: Յովսէփի նամակի շարժառիթ-ները հասկանալով, Պուկաս հայրապետը շարունակում էր. «Դու ևս այդքան տարի զբաղուած էիր միայն մի թեմով, որ այնքան հեռաւոր է, սահմանի վրայ է, և յետ ևս մնացել ըն-կերներիցդ: Աստուծուն և մարդկանց յայտնի է, որ մի աւելի մեծ թեմի արժանի ես, քո թեմն էլ հարկաւ փոքր չէ ուր և մեծ պատիւ կվայելես, բայց շատ հեռաւոր է: Այդքան վաստակ-ներից յետոյ արժանի էր քեզ մի աւելի մեծ թեմ ստանալ, հօ-տի և սեպունների հետ ծանօթանալ, քեզ էլ նրանց ծանօթաց-նել և այդպիսի կենդրաններում Ա. Աթոռի համար աշխատելով բարի անուն ժառանգել, ինչպէս որ այստեղ ես ժառանգած: Այս ժաման անշուշա մտածում ես, ինչպէս որ գրած էիր լուսահո-գի կաթուղիկոսին, հարցնելով նրան, թէ ում կըցանկար Կ. Պօլսի և կամ Զմիւռնիս առաքել: Հայրապետն ի վերջոյ ցաւ էր յայտնում, թէ Յովսէփի նման մի աշխատակից չունի Կ. Պօլսում, ուր իսկապէս, ինչպէս գրում էր նա, վճռւում են Մայր Աթոռին վերաբերեալ գործերը, և խորհուրդ տալիս՝ չյարուիլ հեռաւոր թեմին, որովհետեւ ազդը սովոր է նրան ընտրել, որին տեսնում ու ճանաչում է, այլ կշռել այս բոլորը և յայտնել ի-րեն, թէ ինչ կորոշէ: Արդեօք կաթողիկոսն և Յովսէփը դար-ձեալ իրար բան գրեցին այս առթիւ. — յայտնի չէ միայն թէ սրբազանն Էջմիածին չգնաց, թէև իր ասելով, Պուկաս կա-թողիկոսն երկու անգամ հրաւիրեց նրան, իրը թէ գործերի վարչութիւնը նրան յանձնելու նպատակով: Թերես նրա գա-լուսոը դիւրացնելու համար էր, որ կաթողիկոսը Ռուսաստան ուղարկեց Եփրեմ եպիսկոպոսին: Յամենայն գէպս՝ կաթողի-կոսի մահուան օրը, 28 գեկտեմբերի 1799 տմի, Յովսէփը գեռ Ուռւսաստան էր:

Ինչպէս որ երեսում է Էջմիածնի միաբանութեան նամա-կից յանուն Եփրեմ եպիսկոպոսի 1800 թ. վետրուարի 3-ից, եկեղեցական և հայ ազգի ականաւոր ներկայացուցիչներն երկու անգամ գումարուելով ժողով կազմեցին Պուկասին յա-ջորդ ընտրելու համար և վերջապէս վճռեցին Կ. Պօլսի հայոց ժողովրդին թողնել՝ ընտրել մէկին հետևեալ երեք ընտրելինե-րից, որոնք էին՝ Կ. Պօլսի պատրիարք Դանիէլ արքապիսկոպո-

ուր, ոռւսիաբնակ հայոց թեմական առաջնորդ Յովսէփ արքեպիսկոպոսն և Կեսարիայի թեմական առաջնորդ Ստեֆաննոս արքեպիսկոպոսը: Սակայն 16 յունուարի 1800 ամի կայացած այդ ժողովի համախօսականի մէջ երկու վերջին ընարելիների անունը չկայ, իսկ Դանիէլից յետոյ երկրորդ կանդիտատ անուանուած է Եփրեմ արքեպիսկոպոսը և ահա այդ համախօսականը տանելու համար Դաւիթ արքեպիսկոպոսը Կ. Պօլիս առաքուեցաւ: Թէպէտ ընտրողական ժողովն և կըցանկար քանքարաւոր և հաստատակամ Յովսէփին կաթողիկոս տեսնել, սակայն վախենալով մահմեղական իշխանների վրէժխնդրութիւնից այն մասնակցութեան փոխարէն, որ նա ունեցել էր ռուսաց զօրքերի արշաւանքում թիւրքերի և պարսիկների դէմ, զգուշացաւ պաշտօնապէս նրան ընտրելի հրատարակել:

Դաւիթ եպիսկոպոսի Պօլիս մեկնելուց մի քանի օր յետոյ էջմիածին եկան Առաքել աւագ քահանայ Դամագեանն և Յովսէփի բնիքութեան իշխանը, մի նամակ բերելով վրաց Գէորգ թագաւորից և մի հանրագիր Թիֆլիսի հայ հասարակութիւնից, որոնց մէջ յիշատակեում էին Յովսէփ արքեպիսկոպոսի ծառայ յութիւններն և առաջարկեում՝ նրան ընտրել կաթողիկոս: Այս պատճառով ընտրողական ժողովը մի նոր նիստ դումարեց և մի նոր համախօսական կազմելով, թէ կաթողիկոս ընտրուան Պօլիսի պատրիարք Դանիէլ արքեպիսկոպոսն և ռուսիաբնակ հայոց վիճակի առաջնորդ Յովսէփ արքեպիսկոպոսը, այդ արձանագրութիւնը գեռ Կարին գտնուող Դաւիթ արքեպիսկոպոսին ուղարկեց, որպէս զի առաջնի հետ միաժամանակ Կ. Պօլիսի հայոց համայնքին յանձնուի: Բացի այդ՝ հայ ազգի ընտրողները, Թիֆլիսի պատգամաւորների պահանջմամբ, մի հրաւիրագիր յօրինեցին յանուն Յովսէփ արքեպիսկոպոսի, որ Գէորգ թագաւորը պիտի հասցնէր նրան: Այդ հրաւիրագրում, ի միջի այլոց, հետեւեալ տողերը կան. «;թէ դու չես վախենում այն աղէտներից, որոնք կարող են հասնել ազգին, սուրբ Աթոռին և քեզ, աւրեմն հաճիր գալ մեզ մօտ—մենք վայելուչ մեծարանքով կընդունենք քեզ, սակայն եթէ վախենաս և չկաս, մենք քեզ մեղագիր չենք լինի»:

Ինքն Յովսէփ արքեպիսկոպոսն իւր ընտրութիւնն իսկապէս կայացած էր համարում: Վրաց թագաւորի համակրութիւնը նրա ընտրութեան, նոյնպէս և ռուսաց կառավարութեան աջակցութիւնը, որ անշուշտ պէտք եղած դէպքում կընասնէր

նրան, նրա այդ համոզմունքը գորացնում էին, և նա այդ իմաստով գրեր էր փոխանակում Կ. Պօլսի պատրիարքի, վրաց Գէորգ թագաւորի, նրա Դաւիթ ժառանգի, իւր թիֆլիսաբնակ աղքականների և Էջմիածնի միսքանութեան իրեն համախոն անդամների հետո Բայց և այնպէս նա չէր ուզում Եջմիածնի միսքանութեան և Գէորգ թագաւորի հրաւերով մեկնել տեղից, մինչև որ Կ. Պօլսի ժողովուրդն ընտրութիւնը չվաւերացնէ: «Զեմ կամենում», վրում էր նա Կ. Պօլսի, «ընդունել այդ կոչումը թագաւորներից և երեկոի իշխաններից, այլ նախ Աստուծուց և ապա բոլոր քրիստոսասէր հայ ազգից, որի ձայնը ձայն Աստուծու հաւատալով, յօժարութեամբ կարող կլինիմ ընդունել»:¹⁾

Եերաթի երկար յապաղումը Կ. Պօլսից և Դանիէլ պատրիարքի խարդաւանաց լուրերը, որ անձամբ հետամուտ էր հայրապետական Աթոռը բարձրանալու, վրդովում էին Յովսէփին, և նա այդ բոլորին վերջ դնելու համար նամակով աղդաբարեց պատրիարքին, թէ ոչ ինքն, ոչ էլ Խուսիայի և Վրաստանի հայերը մի ուրիշ կաթողիկոս կըճանաչեն. ուստի և ինդրեց այն գժտութիւնների առաջն առնել, որոնք կարող էին ծագել հայ ազգի մէջ: Բայց այդ՝ 28 վիերազարի 1800 ամի նա դիմեց գաղտնի խորհրդական Ա. Լ. Լաշկարեին²⁾ և Պուկաս

¹⁾ «Ձեռագիր, Մեք զսյն կոչումն ոչ կամիմք լինիլ միայն իթագաւորաց և ի կայսերաց կամ յերեկոի իշխանաց և ի մարդկանց, այլ նախ յԱստուծոյ, և ապա ի բոլոր հասարակութենէ Հայկացուն, քրիստոսասէր ժողովրդոց, որոց բազմ ւթեան ձայն՝ Աստուծոյ հաւատալով կարացուր յանձն առնուլ յօժար ընդունելութեամբ»: Միենայն միտքը նա կրկնում է նոյն իսկ փետրուարի 23 ին գրած նամակում. «Վեհազարունից Հրաման յետին համարեցի և համարիմ, զի մի՛ բանութիւն նովաւմոցէ ի սուրբ աստիճանն, այլ տեղի ետու ազգային սովորութեանց, զի ազգն զիս և ես զազգն ընդգրկելոց եմք: Աչ կամիմք ինքնին կարեռ իշխանութեամբ ն կաստաւորաց մերոց ելանել ի սուրբ զահիդ, այլ կամօքն Աստուծոյ և համահաճութեամբ հասարակ զաւակաց սուրբ Մօրն մերոյ, զի բազմասցի և վերակրկնեցի սէր և Խաղաղութիւն առ ամենեսին, որովք և մեք կարասցուք զգենուլ զզօրութիւն ի բարձանց առ ի հովուել զհօտն Աստուծոյ և կրել զծանրութիւն լծոյն այնորիկ»:

²⁾ Արտաքին գործոց Պետական Յանձնաժողովի Ասիական բաժնի անդամ:

կաթողիկոսի մահուան լուրն և հանգուցեալին յաջորդելու կոչուած երկու կանդիտատի ընտրութիւնը նրան յայտնելով, խնդրեց, «Եթէ հարկաւոր համարէ՝ հասցնել այդ ի գիտութիւն առ որ անկն է»: Ըստ այսմ նոյն թուականի մարտի 16 Բարձրագոյն հրովարտակ ելաւ յանուն Օսմանեան դրան ուռւսաց դեսպան Թամարայի՝ հետեւալ բովանդակութեամբ: «Զանացէք հայոց ազգի կաթողիկոսի ընտրութեան առթիւ աշխատել, որ Դուռը ներկայ դէպքում նոյն ազգին տրուած իրաւունքը չեղծանէ, և փոյժ տարէք, որպէս զի այդ կոչման համար մի անարժան մարդ չընտրուի, որ արծաթով և հնարքներով կարողանար ձեռք բերել միմիայն հայոց ազգի ընդհանուր հաւանութեամբ ձեռք բերելի կոչումը»: Նոյն թուականի ապրիլի 16 դեսպանը զրում էր Լաշկարենին, թէ չնայելով հասարակ ժողովը համակարգութեան Յովսէփ սրբազանին՝ հոգեորականներն և երկելիները միհապէս խոչնդուն են նրան, որովհետև երկիւղ են կրում, թէ նրա ընտրութիւնը ճնշմունք և հալածանք կըյարուցանէ Մայր Աթոռի և հայ ազգի դէմ պարսկական կառավարութեան կողմից՝ յիշեալ սրբազանի Զուրով կոմսի արշաւանքին մասնակցելուն և Պուտեօմիկին իշխանի հետ ունեցած յարաբերութիւնների պատճառով: Գալով Դրան, նա չէ խառնուում այդ գործին»:

Սյս հանգամանքների մէջ Կ. Պօլսի հայ համայնքը Դանիէլ պատրիարքին կաթողիկոս ընորեց, և աս արդէն պատրաստում էր Եջմիածին մեկնել, երր Թամարա զեռպանն այդ գործին միջամուտ եղաւ: Ինչպէս երեսում է նրա կայսեր ուղղած զեկուցագրից ի 16/28 մայիսի՝ նա ազլարարեց Բ. դրան, թէ Կ. Պօլսի հայերը թէն լիովին դիտեն Յովսէփ սրբազանի առաւելութիւնները ո՛ր և է ուրիշ կանգիտատի առջև, բայց վախենալով Բ. Դրան հալածանքից չեն վստահանալ նրան ընտրել. այն ինչ թագաւոր կայսրին հաճելի կըլինի, եթէ հայերը կաթողիկոս ընարեն Յովսէփին, որ բոլոր հայերի վկայութեամբ ամենից աւագն է և արժանաւ որը արքեպիսկոպոսների դասում և մանաւանդ անձամբ էլ ծանօթ է Նորին Մեծութեան: Սրբազանի ընարութեան արգելք եղող գտանգները մէջ տեղից բառնալու համար անհրաժեշտ կըլինէր, որ Բ. Դուռը մի նոր ընտրութիւն կարգադրէ և ինքն հայերի առջև մատենացոյց լինի Յովսէփի վրայ, իբրև ցանկալի կանդիտատի: Սուլթանն այդ առաջարկութիւնն ընդունելուն պէս յանձնեց դեսպանին Թագաւոր կայսրի գիտութեան հասցնել,

թէ նրա ցանկութիւնը կըկատարուի, և նոյն օրը հրամայեց Ծենէդոս աքսորել Դանիէլ պատրիարքին, իսկ Դաւիթ արքեպիսկոպոսին Լէմնոս, որովհետև նա ևս Յովաէփի ընտրութեան հակառակ էր, մտադիր լինելով Դանիէլի մեկնելուց յետոյ նըրան յաջորդել Կ. Պօլսում:

^{16/28} յունիսի 1800 ամի Թամարա դեսպանն ամենահպատակօրէն զեկուցանում էր, թէ «Յովաէփի արքեպիսկոպոսն այս օրերս Էջմիածնի կաթողիկոս ընտրուեցաւ յընդհանուր գոհութիւն հայոց ազգի, որ իւր հակումը դէպի նա մի բազմաքանակ ստորագրութիւն կրող հանրագրով ցոյց տուաւ, որով ազգի ընտրութիւնը հաստատելու սովորական բերաթ են խնդրում Բ. Դունից»: «Նորընտիր պատրիարքը Դաւիթին յանձնեց քերաթն Էջմիածին տանելու պաշտօնը և այդպիսով ազատեց նրան մօտալուտ աքսորի վտանգից: Տերաթի պատճէնը՝ չնոր հակալութեան նամակներով և գործին վերաբերեալ՝ միւս թըլթերով՝ գեսպանն առարեց վիցէ-կանցէրին, ինչպէս որ տեսանելի է նրա զեկուցագրից յանուն թագաւորի ի ¼/3 յուլիսի 1800 ամի:

Երբ Յովաէփի կաթուղիկոս ընտրութիւնը պաշտօնապէս յայտնի եղաւ, Պօլսու Ա. կայսրը «Նորին Կայսերական Մեծութեան Աւագ Տիտղոսը կրող» հրովարտակով ի 28 յուլիսի 1800 ամի հետեւալ խօսքերն ուղղեց Յովաէփի հայրապետին և բովանդակ հայ ազգին.

«... Թէ ըստ օրինակի Մեր վերոյիշեալ նախնեաց և թէ մանաւանդ ի նշան Մեր յատուկ գոհունակութեան նրա (Յովաէփի կաթողիկոսի) ջերմեւանդն զործերից, Մենք հաւաստելով հանգերձ, թէ միշտ Մեր Կայսերական գթութիւնն և բարեհաճութիւնը կընծայենք նոյն Յովաէփի կաթողիկոսին և հայոց հայրապետական աթոռի բոլոր յաջորդներին, եւս և մելիքներին, իւղբաշներին և կառավարիչներին և համայն պատուելի հայոց ազգին,—թոյլ ենք տալիս նրան, Յովաէփի կաթողիկոսին և նրա հայրապետական աթոռի յաջորդներին՝ հոգեսր հանգամանքների և եկեղեցական ծէսերի վերաբերեալ զործերում առաջուայ պէս իւր իրաւասութեան ներքոյ սահնել Մեր պետութեան մէջ բընակուող և Մեզ հապտակ հայագի և հայագաւան մարդկերանց: Վստահ թող լինին նոյն ամենազնիւ Յովաէփի կաթողիկոսը, արգոյ մելիքներն, իւղբաշներն ու կառավարիչներն և ամբողջ յարգելի հայոց ազգը եւ մանաւանդ Մեր պետութեան

մէջ բնակուող և Մեզ հալատակ հայերը՝ որ Մեր հաճութիւնն և թեարկութիւնն ընդ միշտ նրանցից անկապտելի կըմնան»:

Բացի այդ՝ նոյն թուականի նոյեմբեր ամսին բարձրագոյն հրովարտակ գրուեցաւ Կ. Պօրսի ոռւսաց գեսպանին, թէ չՊատուիրում ենք Ձեզ ամեն հնար եղած նպաստ ու պաշտպանութիւն հասցնել հայոց Հայրապետի (Ցովսէփի) կողմից Թիւրքիայի մայրաքաղաքն առաջրուող հոգեոր պաշտօնեաներին այն ամեն պարագաներում, ուր նրանք կարիք կ'ունենան, և ըստ ամենայնի նոյն հրովարտակի (11 յունվ. 1781 ամի) համեմու վարուիլ:

Ապա թէ վրաց Գէորգ թագաւորին գրուեցաւ. «Առաջարկում ենք Ձերդ Բարձրութեան՝ հայրապետի Ձեր երկիրը ժամանելուն պէս՝ Ձեզ յայտնի հին եղանակով և հանդիսով ընդունել նրան և այդ տեղից իւր սրբազան կոչման վայել շուք ու պատուով և թիւնապահ դինուորներով ճանապարհ դնել: Կիայոյս ենք, որ Ձերդ Բարձրութիւնը առաւել մեծ փութով կաշխատի այդ մասին, որովհետև Հայրապետը, Մեր կայսրութեան մէջ արքեպիսկոպոս լինելուց յետոյ, Մեր ձեռքով է հաստատուած իւր այդ նոր աստիճանում»:

Յոլսէփի կաթողիկոսն էլ իւր կողմից՝ յառաջ քան Ռուսաստանից մեկնելը մի թուղթ ուղղեց ոռւսաց կառավարութեան, որով միջնորդում էր՝ «ի տրիտոր իւր ծառայութեանց, որ մատուցել է ոռւսաց պետութեան, ի յարգանս հայրապետի վսեմ կոչման և ի նշան ամենողորմած բարեհաճութեան դէպի հայ ազգը հոգ տանել իւր հօտի պէտքերի մասին և վարձատրել իւր մերձաւոր աշխատակիցներին. մինոյն ժամանակ մատնացոյց լինում Գրիգոր վարդապետի վերայ, որպէս իւր յաջորդի; որին մտադիր էր եպիսկոպոս ձեռնազեկլ Խնդրուած կէտերից շատերը կատարուեցան և բացի այդ՝ «ի յարգանս», առուած է հրովարտակում, «հայրապետի ծառայութեանց յօդուտ մեր Կայսրութեան» այն ոռնիկը, որ նա ստանում էր իրեւ Ռուսաստանի վիճակաւոր առաջնորդ, մշտուկան թոշակի վերածուեցաւ և նրան 2օ արշին զգեստացու դիպակ ընծայեցին. Բոստոպչին կոմսն այդ մասին զեկուցում տալով Հայրապետին գրում էր. «Նորին Կայսերական Մեծութիւնը բարեսիրաբար հաճեցաւ այս չնորհումներով որոշել Ձեզ միւս հայրապետներից, Ձեր նախորդներից... Հաղորդում եմ Ձեզ, որ Ձեր այս

տեղ վարած առաջնորդական պաշտօնի յաջորդին էլ մի վայեւ լուչ սոճիկ կը յատկացուի»:

30 Հոկտեմբերի 1800 ամի հրովարտակով հրամայւում էր Աժտարխանի նահանգապետ գեներալ-Լէյտենանտ Կնորքին-դին՝ «Հայրապետին մինչև Թիֆլիս հասցնելու համար տալ նըրան մի վայելուչ յուղարկաւոր վաշտ կազակների աւագ սպայով, որ կարենար ծառայել նըրան իրքու պրիստաւ (յանձնակատար)»:

Բարձրագոյն հրովարտակը, օսմանեան դրան բերաթն և միւս թղթերը հասան Յովսէփ կաթողիկոպին Աժտարխանում 18 նոյեմբերի, և այնուհետև նա ճանապարհ ընկաւ դէպի Էջմիածին, Սահմանամերձ Մոզդոկ քաղաքը ժամանելուց յետոյ նա 18 յունուարի 1801 թ. մի նամակ առաքեց Ռոստոպչին կոմսին, որով դարձեալ չնորհակալութիւն էր յայտնում իւր գտած կայսերական չնորհների փոխարէն, Այդ նամակը հետեւեալ խօսքերով է վերջանում, «Եթէ Նորին Կայսերական Մեծութեան Ամենասողորմած թագաւորին երբ եիցէ հանոյ թուի իւր ողորմած հայեցուածքը դարձնել Արարատեան նահանգի և իմ հայրապետանիստ Էջմիածնի մենաստանի, իւր խոնարհ ու հաւատարիմ ազօթարարի վերայ, կարելի է պատսպարել նըրանց թշնամիների յարձակութից մի զօրաբաժնով, որի վրայ, ըստ իս, լաւ կըլինէր հրամանատար նշանակել այն երկիրն և ազգերի բարքն ու վարքը լաւ ճանաչող հեծելազօրի գեներալ Սաւելյանին»:

Ռոստոպչին կոմսն իւր կողմից՝ բատ բարձրագոյն հրամանի գրում էր Հայրապետին (11 յունի. 1801), թէ «Վեհափառ Կայսրը հաւատալով հաւատում է Զեր երախտազիտութեան ցոյցերին և Զեր անկեղծ հաւատարմութեան իւր գահին, մանաւանդ որ դուք այդ բոլորը նշանաւոր գործերով հաւատած էք, վասնորոյ և առանց ընաւ երկրայելու կարող էք ապագային ևս յոյս զնել նըրա արքայական բարեհաճութեան և հովանաւորութեան վրայ, որոնք Զեր մասնաւոր անձնուիրութեան պատճառով յատուկ Զեր անձին և համայն ազնիւ հայ ազդի վրայ տարածուած կըմնան»:

Հայրապետը Թիֆլիս ժամանեց 10 փետրուարի 1801 ամի: Գէորգ թագաւորին այլ ևս կենդանի չգտաւ: Գեներալ Մայօր Լազարեր 11 փետրուարի ժանուարնում էր գեներալ Մայօր Կնորքինդին. «Նորին Սրբութիւնը հայոց Յովսէփ Հայրապետն

երէկ Թիֆլիս ժամանելուն պէս՝ Յովհաննէս արքայորդին իւր ամենալաւ իշխանների հետ միասին դիմաւորեց Նրան Կուկի կոչուած գիւղի մօտ. Այնուհետև՝ մինչ նա անցնում էր՝ ումբաձգութիւն եղաւ. իսկ նրա քաղաք մտնելու բոպէին ընդ առաջ ելաւ դոների մօտ հաւաքուած եկեղեցական դասը հանդիսաւոր զգեստաւորութեամբ. ուր նորին սրբութիւնն ես զգեստ հագաւ, ապա թէ հետի զնաց մինչև հայոց Վանքի եկեղեցին և այն տեղ թագաւոր Կայսրի արեշատութեան համար մաղթանք կատարեց, մի պատշաճ քարոզ առելով ժողովրդին: Հասցնելով այս ի գիտութիւն Ձերդ գերազանցութեան, կաւելացնեմ, որ ես էլ գեներալ-Մայօր Գուլեակօվի և մի քանի սպաների հետ դիմաւորեցի նրան Կուկի գիւղի մօտերքում: — «Ի՞մ Թիֆլիս գալուց յետոյն, գրում էր Հայրապետը Ռոստոպչին կոմսին, «տեղույս հանդամանքների հետ ծանօթանալով, բաւական յաջողեցայ յունկնդրութիւն և ի հնագանդութիւն իմ Կայսրին ըերել թէ արքայորդիներին, որոնց հետ անձամբ տեսակցութիւն ունեցայ և թէ անուանի իշխաններին: Թագաւորիս շնորհները վայելելով հոգեպէս միսիթարուած եմ, որ գէթ մասամբ նպաստաւոր եղայ Նորին Կայսերական Մեծութեան սրբագան կամքի իրագործման և օգտաւէտ վրաց թագաւորութեան՝ դրան ընդ միշտ Ռուսաց Պետութեան հետ միացնող Բարձրագոյն մանիթէստի հրատարակման գործում: Այս իսկ Բարձրագոյն կամքի իրագործման համար շատ աշխատանք կրեց իւր ծառայութեան պարտքին համեմատ նաև գեներալ-մայօր Լազարես. Վրաստանը համայն Ռուսիայի հպատակութեան ներքոյ գնող Բարձրագոյն մանիթէստը ամսոյս 16-ին վրաց եկեղեցու մէջ յայտարարելուց յետոյ՝ նոյնը մի առանձին հազորդագրութեամբ ուղարկեց և ինձ հայոց եկեղեցում ծանուցանելու համար. որ և ես ամսոյս 17-ին ընդհանուր հաճութեամբ և պատշաճաւոր հանդիսով հրատարակեցի: Այս առթիւ տեղի գտած հանդիսի կարգը պատիւ ունիմ ներկայացնել ընդ սմին»:

Մինչ այս մինչ այն՝ երեք եպիսկոպոսից բաղկացած մի պատգամաւորութիւն եկաւ Էջմիածնից՝ կաթողիկոսին Մայր Աթոռը տանելու համար: Նորին Սրբութիւնն արգէն. պատրաստում էր ճանապարհ ընկերել և բարե մնայի այցելութիւններ էր անում: Փետրուարի 27 նա կամեցաւ բաղանիք գնալ: Գարիա թագուհին այդ իմանալով, առաջարկեց նրան Արքայական կոչուած բաղանիքը, որ այն ժամանակ թագուհուն էր

պատկանում: Հայրապետն ընդունեց այդ առաջարկը՝ սակայն բաղանիքից յետ գալուն պէս տկարութիւն զգաց և անկողին մտաւ. հիւանդի դրութիւնն օր ըստ օրէ ծանրացաւ, և մարտի 9-ին նա իւր հոգին աւանդեց: Մահուան մերձենալը զգալով, նա կանչեց իւր մօտ Եջմիածնից պատգամաւոր եկած Սիմէոն եպիսկոպոսին, խոստովանուեցաւ, հաղորդութիւն ընդունեց և առաւտեան 9^{1/2} ժամին հանգեաւ ի տէր եղբօր գերդաստանի շրջանում: Մեռնելուց առաջ նա խնդրեց Սիմէոն եպիսկոպոսին և իւր մօտ գտնուող Գրիգոր վարդապետին՝ անյապազ Եջմիածին ուղարկել իւր գործը, «որպէս զի իւր հոգու վրայ մեղք չմնայ», —բացի մի փոքրիկ տփից, որ պարունակում էր յատուկ իրեն ընծայուած մի քանի թանկագին իրեր, այդ տուփը նա խնդրեց տալ իւր եղբօրը՝ Սողոմոն իշխանին: Խընդրեց թաղել իւր մարմինն Եջմիածնում, Սիմէոն կաթողիկոսի գերեզմանին կից:

Զենք յապաղիլ այն զրոյցների վրայ, որոնք մինչև այս օր չեն մոռացուած հայերի մէջ, իբր թէ նա թունաւորուած էր. այդ զրոյցները որ և է իրական հիմք չունին. նրա կեանքը ցանկալի էր նրան շրջապատող անձերին:

Այդպէս աւույդ հասակում խափանուեցաւ ի Ռուսաստան Հայաստանեաց եկեղեցու առաջին ներկայացուցչի գործունէութիւնը, այն շենք ձիրքերով օժանուած մարդու, որ նշանաւոր երախտիք արաւ կառավարութեան և իւր Եկեղեցուն և Ռուսաց միապետների առջև շնորհ ու հովանաւորութիւն վաստակեց ոչ միայն իւր, այլ և թէ ռուսիաբնակ և թէ օտարաբնակ համազգիների օգտի համար, նա հաստատեց իւր ամբողջ հօտի գիտակցութեան մէջ այն գաղափարը, թէ հայ ազգի ուղղի հասկացուած շահերը լիովին համակերպ են Ռուսաստանի շահերին և դրա բարձր կոչման Արենելքում. նա մի պայծառ օրինակ հանդիսացաւ իւր յաջորդների, այն է՝ ամենայն հայոց կաթողիկոսների համար, որոնք նրա գծած շաւզով ընթացան. նրա օրինակով ներշնչուած էր ներսէս կաթողիկոսը, որ անձնուիրութեան և անձնուրացութեան բազմաթիւ գործեր կատարեց Ռուսիայի տիրապետութիւնն իւր հայրենեաց մէջ հաստատելու համար 1827—29 թ. թ. պարսից ու թիւրքաց պատերազմների ժամանակ, և նմանապէս մեծ պատիւներ ու շնորհ գտաւ Ռուսաց Միապետների առջև և յարգանք նրանց պետական մարդկանցից.

Այսպէս ուրեմն Պետրոս Մեծի ժամանակից ի վեր Ռուսաստանի և հայ, ազգի միջև հաստատուած բարոյական կապն ի մտելամութիւնը լիովին զիտակցօրէն ամրացան Եկատերինէի իմաստուն կառավարութեան օրով. և այդ յարաբերութիւնների բնական հետեանք էին Ռուսաստանի ամեն կողմանց հայերի բոլորանուէր հաւատաբմութիւնն և նրանց մատուցած ելախտիքը, որոնք բազմաթիւ հրովարտակներով յանուն հայ ազգի և նրա հայրապետների վաւերացուած են նոյն իսկ Գահի բարձունքից:

Իւր հայրենիքին լաւութիւն կամեցող իւրաքանչիւր քաղաքացու, և մանաւանդ իշխանութիւն վայելող մարդու սուրբ պատրաքն է վառ պահել այդ զգացումներն և նպաստել դրանց զարգացման, բարի ծառայութիւն անող չեն նրանք, որոնք թուլացնում են այդ բարոյական շաղկապներն և փոխադարձ անվատանութիւն զրգուում այնտեղ, ուր դրա համար բնաւ պատմական հիմք չկայ. Անցեալի ծանօթութիւնը վերացնում է մէջ աեղից թիւրիմացութեան առիթներն և փոխադարձ համակրութեան ու յարգանքի բարի զգացումներ յառաջ բերում: Նրջանիկ կը համարենք մեզ, եթէ մեր հետազոտութիւնը գէթ փոքր ի շատէ նպաստէ այդ գործին:

Ն

Արտասոված «ԼՈՒՄԱՅ» ամսագրից

